

Գ. Մ. ԹԱԼԻՍՏԱՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՊԱՅԲԱՐՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՄՈՏ՝
ՀԱՆՈՒՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

491.99

10-93

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ո Ն

1943

491.99
U-93

№ 67337

Դ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՊԱՅԲԱՐԸ ԱՐԵՎԵՏԱՀԱՅԵՐԻ ՄՈՏ ՀԱՆՈՒՆ ԱՇԽԱՐՀԱՐԱՐԻ

Հայոց լեզվի պատմութեան ամենից քիչ ուսումնասիրված էջերից մեկն է արևմտահայ աշխարհարարի ձևավորման ու մշակման պատմությունը: Մովսեսայ լեզվաբաններին գեոնս չի դրսևդեցրել մանավանդ արևմտահայ գրապայքարը, այնինչ այդ պայքարը ստացել է սոցիալ-քաղաքական ուժեղ հրահրաւորում և ըստ էութեան դրսևորվել է մի կողմից՝ որպէս մեռնող, իր դարն ապրած ֆեոդալական հարաբերութեանների ու մշտն կողմից՝ կապիտալիստական հարաբերութեանների ալ խոսքով կղերապահականողական ու բուրժուական դադաւարախոսութեան բախման արտահայտութեանը: Միաժամանակ՝ աշխարհարարի և գրարարի շուրջ արծարծված բոլոն միճարանութեանները սերտ կերպով առնչվում են այն օրհասական պայքարի հետ, որը հայ ժողովուրդը մղել է սուլթանական բնապետութեան դեմ, և որը բորբոքվել է հատկապէս 19-րդ դարի երկրորդ կեսին, ալսպէս կոչված հայկական հարցի հրահրման ու ազգային ազատագրական դադաւարների լայն տարածման տարիներին: Ահա թէ ինչո՞ւ, ի տարբերութեան հայ ժողովրդի արեւելահայ հատվածից, — որտեղ գրապայքարը անհամեմատ կարճ տեւեց և գրեթէ աւարտվեց 70-ական թվականներին, արևմտահայերի մոտ մեր նշած հանգամանքների, նաեւ արևմտահայ ժողովրդի աշխարհով մեկ դրված լինելու պատճառով գրապայքարը շարունակվեց մինչև 90-ական, նույնիսկ 900-ական թվականները, անդամ մինչև 20-րդ դարի սկիզբները:

Արևմտահայ գրապայքարը մեծ ու ծավալուն թեմա է: Այդ արարին մասնակցել են 100-ից ավելի գրողներ, հրապարակա-

խոսանք, քաղաքական և հասարակական գործիչներ, փաստաբաններ, նույնիսկ վաճառականներ: Մեկ առ մեկ ծանոթանալ նրանց բոլորի կարծիքներին ու փաստարկումներին, քննարկել դրանք դեթ հարեանցիորեն, կնշանակելու դրել մի սովոր հատոր: Այստեղ մեր նպատակն է տալ գրապայքարի համառոտ ուրվագիծը, այն դիտելով որպես 19-րդ դարի թյուրքահայ հասարակական քաղաքական կյանքի հետ սերտ առնչություն ունեցող մի երևույթ:

Անշուշտ, երբ խոսում ենք գրապայքարի մասին, աշխարհաբարի ձևափոքման մասին, այդ չի նշանակում, թե աշխարհաբարը 19-րդ դարի կեսերից է սկիզբ առել, գրի առնվել: Աշխարհաբարը, ինչպես հայտնի է, միշտ էլ եղել է ժողովրդի խոսակցական լեզուն, նրա հետքերը մենք գտնում ենք ամենահեռավոր անցյալում, նույնիսկ 5-րդ դարի դրականության մեջ, ինչպես այդ ցույց են տվել բազմաթիվ բանասերներ իրենց ուսումնասիրությունների մեջ: 13—14-րդ դարերում աշխարհաբարը շատ ավելի կենսունակ է դարձել և ավելի մեծ չափով թափանցել գրաբար գրքերի, բազմաթիվ արձանագրությունների մեջ: Ակադեմիկոս Հ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ բերում է ուշագրավ հատվածներ 14—15-րդ և հետագա դարերի աշխարհաբարից: Դրանք շատ քիչ տարբերություն ունեն հետագա, ասենք 19-րդ դարի առաջին կեսի պոլսահայ աշխարհաբարից: Ուրեմն ոչ թե խոսքը վերաբերում է աշխարհաբարի սկզբնավորմանը, ձևափոքմանը, այլ այն բանին, թե ինչ սոցիալ քաղաքական պայմաններում ժողովրդի խոսակցական լեզուն կարողացավ հաղթահարել հին լեզուն և դառնալ գրական լեզու:

1

Արեւմտահայ գրապայքարը պետք է բաժանել երեք տարբեր շրջանների, հասցնելով մինչև 90-ական թվականները:

Առաջին շրջանը, որը ընդգրկում է 1840—50-ական թվականները, աչսինքն՝ ընդամենը մեկ տասնամյակ, բնորոշ է ոչ այնքան գրաբարի և աշխարհաբարի միջև սկսված պայքարի հրահրումով, որքան կողմերի լուռ նախապատրաստությամբ, աշխարհաբարի օրոքներն ավելի նպաստավոր դիրքեր գրավելով, վստահ քայլեր ասպարեզ իջնող աշխարհաբարի առաջ գրաբարի բնական նահաջով:

Այս տասնամյակում Կ. Պոլսի կղերապահայանողական խա-
վերը, որոնց պաշտպանութեան տակ է գտնվում գրաբարը, դեռևս
նորածագ Հայ բուրժուազիային համարում են շատ թույլ իրենց
դեմ կռիւլու համար, նրանք դեռևս աշխարհաբարի մեջ չեն տես-
նում հին լեզվի գերեզմանափորին, մի տեսակ լուռ համակերպու-
թյամբ են հետևում նոր լեզվի առաջին քայլերին, անտարբերու-
թյամբ են դիտում նրա խիզախումները, այնպիսի մի անառիկ,
հազարամյակների հնություն ունեցող, տոկուն բերդի դեմ, ինչպի-
սին է գրաբարը: Գրապայքարը այդ շրջանում, կարծեք, ընդունում
է մի տեսակ մկան և կատվի խաղի բնույթ: Գրաբարյանները ար-
համարհանքով են խոսում ռամկի լեզվի մասին, այն լեզվի, որը,
ըստ նրանց՝ անգոր է որևէ բարձր ու վեհ գաղափար արտահայտե-
լու, համաշխարհային մտքի որևէ ուղագրով արտահայտութեանը
թարգմանելու:

Որ աշխարհաբարը իսկապես 19-րդ դարի կեսերին դեռևս
թույլ էր, անգոր, խառն ու աղճատված, ողողված օտարաբանու-
թյուններով, այդ վեր է որևէ կասկածից: Ա՛րն էր ուրեմն աշխար-
հաբարյանների հենակետը, ինչի վրա էին հույս դնում նրանք:
Այն բանի վրա, որ աշխարհաբարը խոսակցական, կենդանի լեզու
էր, որը զարգացման լայն հեռանկարներ ուներ, իսկ գրաբարը վա-
ղուց ասպարեզից քաշված, մեռած մի լեզու էր, որով ոչ ոք չէր
խոսում ամբողջ աշխարհում: Հայ բուրժուազիան փառահ էր, որ
հասարակական հարաբերութեանների ներկա պայմաններում
միանգամայն հնարավոր էր նոր լեզվի զարգացումը:

Այսպիսով՝ աշխարհաբարի հաղթանակը պայմանավորված էր
բուրժուական հարաբերութեանների ծավալումով, որը 1840-ական
թվականներից սկսած, հատկապես Սուլթան Մեջիդի հայտնի ռե-
ֆորմներից հետո, ապրում էր աննախընթաց զարգացման մի շրջան:

Այդ ռեֆորմները, որոնք պատմության մեջ հայտնի են Թան-
զիմաթ անունով, անշուշտ շատ են գերազնահատված բուրժուական
պատմագրութեան կողմից: Հատկապես թյուրք պատմագրութեանը
շատ է թմբկահարել Թանզիմաթը և այն համարել այնպիսի ռե-
ֆորմների մի օրենսդրական ամրապնդում, որոնց նմանը իբր թե
այդ թվականներին ոչ մի երկրում չի եղել, և թե այդ բոլորը կա-
ռարվել են Սուլթանի մեծահոգութեան և բարյացակամութեան,

մասամբ էլ եվրոպական պետությունների միջամտության շնորհիվ:

Այս կարծիքը միանդամայն սխալ է և նպատակ ունի սքողել սոցիալական այն ուժեղ տեղաշարժերը, որոնք նկատվում էին 19-րդ դարի առաջին կեսում Օսմանյան կայսրության մեջ: Ըստ էության այդ ռեֆորմները ոչ վերևից, Սուլթան Մեջիդի կողմից շնորհված և ոչ էլ եվրոպական դիվանագետների կարխնետներում խմբադրված միջոցառումներ էին, որոնք արդյունք էին այն չարված դատակարարային պայքարի, որին ակտիվորեն մասնակցում էր թյուրք և հսկայական ժողովուրդների դյուղացիությունը, հատկապես մի քանի դար ներշնչիների սարսափի տակ ապրած հայ դյուղացիությունը:

Այնպիսի մի երկրում, ինչպիսին էր Ֆեոդալական խափարն մեջ խարխափող Թյուրքիան, անշուշտ Թանզիմատի օրենքները առաջադիմական որոշ կողմեր ունեին: Այդ ռեֆորմներով գեթ ձևականորեն վերացվում էր ռայայի և մահմեդական ժողովրդի միջև սահմանված օրենսդրական տարբերությունը: Գեթ մասամբ ենք ասում, որովհետև մինչև վերջերս էլ, մինչև 20-րդ դարի սկիզբները դատարանում չէր ընդունվում քրիստոնյայի վկայությունը:

Սուլթան Մեջիդի ռեֆորմները առհասարակ թյուրքական դյուղում ոչ մի արձագանք չգտան, կյանքը շարունակվեց այնպես, ինչպես առաջ, նույն հարկերը, շահագործման նույն վայրենի միջոցները: Թանզիմատի օրենքներից ավելի շատ օգտվեց քաղաքային բուրժուազիան, առևտրական դասը: Թանզիմատը բաժնականաշատի ներառվորություններ էր տալիս կուլտուրական կազմակերպությունների, միությունների ստեղծմանը, մամուլի տարածմանը:

Հայերը, որոնց թիվը Թյուրքիայում ավելի քան 2 միլիոն էր, զգալի տեղ էին բռնում առևտրի ասպարեզում: Հատկապես Պոլսում, Իզմիրում և այլ առևտրական քաղաքներում ու նավահանգիստներում առևտուրը հիմնականում գտնվում էր հայերի, հույների և հրեաների ձեռքին:

Ոմքեր են Թյուրքիայի առևտրականները, — գրում էր Էնգելսը: — Համենայն դեպս ոչ թյուրքները: Երբ դեռ սրանք նախնական սովորույթների կենցաղով էին ապրում, առևտուր անելու նրանց եղանակը քարվան կարելն էր. հիմա այնտեղ, որտեղ փոքր ինչ քաղաքակրթվել են, նրանց առևտրի եղանակը կամայական ու ճնշիչ:

հարկահանությունն է։ Ծովային մեծ նավահանգիստներում տեղա-
վորված հուլները, հայերը, սլավոնները ու ֆրանկները իրենց ձեռ-
քերն են հավաքել ամբողջ առևտուրը¹։

Իրենց առևտրական հարաբերությունների բերումով վաղուց
շիման մեջ լինելով արևմտյան պետությունների հետ՝ բազմաթիվ
հայ ուսանողներ սովորում էին եվրոպական մայրաքաղաքներում։
Թանգիմաթին հաջորդող տարիներին այդ հոսանքը ավելի ևս մե-
ծացավ։ Այժմ ոչ միայն հայ, հուլն, այլև բազմաթիվ թյուրք երի-
տասարդներ էին գնում Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա սովորելու։
Նրանք՝ վերադառնալով Պոլիս կամ Իզմիր, գրավում էին բարձր
պաշտոնները թե պետական ապարդատում և թե վարչական ու կուլ-
տուրական հիմնարկներում։

Այս ներուճի առաջին մտահոգությունն էր ցնցել դարավոր
թմրությունից թյուրքիայի ժողովուրդներին։ Մեծ աշխուժություն էր
հանդես բերում մասնավորապես հայ բուրժուազիան, որը Թանգի-
մաթին հաջորդող 20-ամյակում, այսինքն՝ մինչև արյունոտ Սուլ-
թանի դահ՝ բարձրանալը, ապրեց կուլտուրական, լուսավորական
զգալի վերելք. խոշոր շափով մեծացավ դպրոցների ցանցը։ 1857
թվին Պոլսում կար ավելի քան 40 հայկական դպրոց։ Նույնպիսի
աշխուժացում նկատվեց թատրոնի, մամուլի, կրթական ու կուլտու-
րական քննությունների կազմակերպման գործում։

Հայ բուրժուազիան ահա իր վերելքի այս ծաղկուն շրջանում
նկատում էր, որ մեծ խոչընդոտ է գրաբար լեզուն։ Մասսաների
լուսավորության, դաստիարակության, նրանց առաջավոր կուլտու-
րայի հետ կապելու, առևտրական հարաբերությունների ծավալման
առաջին նախապայմաններից մեկը լեզուն էր, գրավոր լեզուն։
Այլևս անհնար էր միայն գրաբարի գեղեցկության, դասական լի-
նելու քարոզով օրորվել և գրել այդ մեռած լեզվով, որից ոչ ոք
ոչինչ չէր հասկանում։

Եթե մինչև 19-րդ դարի կեսերը աշխարհաբարը իրեն զգացնել
էր տալիս՝ հետզհետե ավելի ու ավելի մուտք գործելով գրականու-
թյան մեջ, դառնալով զանազան հրատարակությունների լեզուն,
ապա 50-ական թվականներից արդեն այն դառնում է պայքարի

¹ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, стр. 391—392.

առանցք: Մամուլում և առանձին բրոշյուրներում խոսվում է աշխարհաբարին զարկ տալու, գրաբարից հրաժարվելու մասին:

Այսպիսով գրապայքարը 19-րդ դարի կեսերին թափանցում է մամուլի մեջ. «Արժիվ Վասպուրական»-ի մեջ Խրիմյանը, «Նվրոպայի» մեջ Մխիթարյանները, «Բանասեր»-ի մեջ Մ. Հիսարյանը դառնում են այդ պայքարի առաջին բորբոքողները, պայքար, որին աստիճանաբար մասնակցում են ուրիշ բազմաթիվ թերթեր:

1851 թվականը նշանավորվում է աշխարհաբարի օգտին կատարված երկու խոշոր քայլով: Այդ թվականին լույս են տեսնում Մ. Հիսարյանի «Խոսքով և Մաքրուհի» վեպը մաքուր աշխարհաբարով (որին նա. դժբախտաբար չկարողացավ հավատարիմ մնալ իր հետագա աշխատություններում¹) և Գր. Օտյանի «Առաջարկություն աշխարհաբարի վրա» բրոշյուրը, որը հանդիսանում է արևմտահայ լեզվապայքարի առաջին անկյունաքարերից մեկը: Ընդամենը մեկ տարի հետո Փարիզում սովորած, Պոլիս վերադարձած Նիկողայոս Զորայանը իր «Ընթերցասիրություն» հայտնի աշխատության մեջ գրում էր:

«Ինչ որ ընենք, որչափ ալ աշխատինք, ալ ասկե ետե անհնար է մեզի, ազգին այս ցրվյալ վիճակին մեջ գրաբար լեզունիս ընդհանուր լեզու մը ընելու: Այս կարծիքը ասկե քանի մը տարի առաջ առաջին անգամ հրապարակելովս ազգին մեջ ինքզինքնին ազգասեր կարծել տալու փափագող ոմանք զիս թշնամանեցին. բայց ես ծիծաղեցա վրանին, սպասեցի, որ ժամանակը օգնությանս հասնի կարծյացս ուղղությունը հաստատելու, վասնզի գիտեի, որ ատենոք Գալիլեոսն ալ սրբաքննության ատյանին սուրբ դատավորները քիչ մնաց կը խորովեին կոր աշխարհի՛ կը դառնա ըսելուն համար... հիմակ ժամանակը շատ փոխվեցավ, գոնե մեր մայրենի լեզվին համար, ալ հիմա ինձի հետ մեկտեղ շատերն ալ համոզված են, որ գրաբարը հասարակաց լեզու չենք կրնար ընել, այլ փոխարեն մեր աշխարհաբար լեզուն զարգարելու ու տարածելու է»²:

¹ Մ. Հիսարյանը 1867 թվականին հրատարակեց իր 2-րդ վեպը «Նեոն կամ կատարած աշխարհի», որը զբղծված է կիսազրաբար: Գրեթե նույնպիսի լեզվով է գրված 1871 թվին լույս տեսած նրա «Դիվանը»:

² Ն. Զորայան, «Ընթերցասիրություն», Կ. Պոլիս, 1852 թ.:

Գր. Օտյանին, Նիկողայոս Զորայանին հետեցին և ուրիշները, ու այսպիսով ավելի հրահրվեց գրապայքարը: Բայց հենց այս շրջանից, պայքարի բորբոքման այդ օրերից էլ սկսվում է գրապայքարի 2-րդ շրջանը, որի մասին մենք հարկադրված ենք խոսել ավելի հանգամանորեն:

II

Ովքե՞ր էին այս պայքարը բորբոքողները: Ընդհանուր առմամբ Ֆրանսիայում սովորած, 1848 թվականի ֆրանսիական ռևոլուցիայի գաղափարներով տոգորված մի խումբ երիտասարդներ, որոնք Պոլիս փերադատնալով, մոլեգնորեն մարտնչում էին դարավոր տգիտության ու խավարի դեմ: Այս շրջանում արդեն աշխարհաբարյանների դիրքը ուժեղ էր: Ոչ միայն այն պատճառով, որ ասպարեզի վրա էին զարգացած, բազմաթիվ լեզուներ խմացող հմուտ հասարակական գործիչներ ու հրապարակախոսներ, և աշխարհաբար լեզվով հրատարակում էին այնպիսի պարբերականներ, ինչպիսիք են «Արշալույս Արարատյան»-ը Իզմիրում, «Մասիս»-ը՝ Կ. Պոլսում՝ այլ-այն պատճառով, որ այդ գործիչները հենվում էին օրեցօր աճող ու ինքնագիտակցության եկող մասսաների վրա: Աշխուժացումը ուժեղանում էր հատկապես դեմոկրատական շերտերի մեջ, հատկապես արհեստավորական շրջաններում, էսնաֆ դասի մոտ:

Գրապայքարի այս երկրորդ շրջանը, որը շարունակվեց մինչև 70-ական թվականների վերջերը, ավելի ճիշտ մինչև 80-ական թվականների կեսերը, այսինքն՝ մինչև 1884 թվականը՝ «Արևելք» օրաթերթի հրատարակումը, բնորոշ է նրանով, որ այստեղ արդեն պատնեշի վրա են երկու ուժեղ հակառակորդներ, և պայքարը մղվում է օրհասական կատաղությամբ: Երկու կողմերը իրենց զինանոցից դուրս են հանում ամեն կարգի զենքեր, թունոտ նիզակներ, ու բանավեճի ընթացքում կանգ չեն առնում ոչ մի բանի առաջ:

Այս շրջանի պայքարի առաջին ազդանշանը հանդիսացավ Գր. Օտյանի «Առաջարկություն աշխարհաբարի վերա» գործը:

Որն էր այդ բրոշյուրի ելակետը: Գր. Օտյանի պահանջը հենց հայ բուրժուազիայի պահանջն էր՝ թափանցել ժողովրդական մասսաների մեջ, ազդել այդ մասսաների վրա, կարողանալ համոզել

նրանց: Հայ բուրժուազիան, ինչպես և առհասարակ բուրժուազիան իր վերելքի շրջանում ձգտում է մոտենալ ժողովրդին, հենվում է նրա վրա: Հայ բուրժուազիայի տնտեսական և քաղաքական շահերը պահանջում էին, որ 400-ամյա տգիտության ու հետամնացության միջից դուրս գա հայութունը և լուսավորվի, գիտութունը, լուսավորութունը, կուլտուրան թափանցեն եթե ոչ դավառները (այդ դեռ շուտ էր), գոնե քաղաքները, զարգանա առևտուրը, հայ վաճառականը կարողանա մրցել օտար վաճառականի հետ: Այս բոլորը անհնար էր կատարել առանց հասարակաց համար ընդհանուր մի լեզվի ստեղծման, որի մասին խոսում էր Նիկողայոս Զորայանը դեռևս 1847—48 թվերին:

Գրաբարը, որը սահմանափակ թվով մարդկանց լեզուն էր, այլևս չէր կարող հայ բուրժուազիայի հոգևոր և նյութական շահերին ծառայել: Ինչքան էլ այն լիներ գեղեցիկ, հարուստ, կոկված և մշակված լեզու, ինչքան էլ նրա հետ կապված լիներ աստվածային լեզուն՝ Ադամի և Եվայի խոսած լեզուն լինելու առասպելը, ինչքան էլ այդ լեզվով գրված լինեին անցյալի հայ գրականության փառուն նմուշները, որոնցով հպարտանում էր նույնիսկ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, այնուամենայնիվ, հայ բուրժուազիան շահագրգռված էր հրաժարվել այդ բոլորից, հանուն իր տնտեսական ու քաղաքական շահերի: Գր. Օտյանը իր աշխատության հենց առաջին հատվածում ջերմորեն պաշտպանում էր «հասարակաց լեզուն» ստեղծելու անհրաժեշտությունը: Նա գտնում էր, որ անհապաղ պետք է ստեղծել «լեզու մը ամենուն հասկանալի, դյուրին ու պարզ ոճով, որ գրելու ալ դժար չըլլա լեզու մը, որ այս հատկություններեն զատ կարգ ու կանոն ունենա»¹:

Իսկ այդ կարգ ու կանոնը լեզվին պետք է տալին իրենք՝ Կ. Պոլսի զարգացած մտավորականները, որոնք բավականաչափ պաշար էին ձեռք բերել նաև լեզվագիտության դժով: Գր. Օտյանը միաժամանակ զարգացնում էր այն միտքը, որ «Ազգային ուսումնական հառաջադիմությունը մտքերուն հաղորդակցությամբը կըլլա, ասով ամեն մարդ իր մտածությունները ուրիշներու հաղորդելով

1 Գ. Օտյան, «Առաջադիմություն աշխարհաբար լեզվի վրա», Կ. Պոլս, 1851 թ., էջ 1:

անոնցմե լույս կառնու իր դատողութեան վրա.... եթե այս չըլլա, ամեն մարդ իր խելքին հավնած ծուռն ալ իբրև ուղիղ կընդունեն»¹:

Ընդունելով հանդերձ գրաբարի անզորութիւնը «հասարակաց լեզու» դառնալու համար, այնուամենայնիւ Օտյանը դեռ չէր կարողանում իսպառ հրաժարուիլ գրոց լեզվից, նա առաջարկում էր գրաբարի և ժողովրդի խոսակցական լեզվի միասնական մատենութիւնով զարգացնել նոր լեզուն:

Նա իր այդ աշխատութեան մեջ ցույց էր տալիս, որ գրաբարը դուրս կարողանա հետադաշտում դառնալ ընդհանուր լեզու, սակայն այդ ամէլի երկար ժամանակ է պահանջում, դրա համար երկար ճանապարհ է պետք կտրել, մինչդեռ ժողովրդի խոսած լեզուն մշակելով, գրաբարի օգնութեամբ ճոխացնելով՝ այն «հասարակաց լեզու» դարձնելը անհամեմատ ամէլի հեշտ ^Վ և անհամեմատ ամէլի կարճ ժամանակ է պահանջում:

«Իրավ, — գրում էր Գր. Օտյանը, — գրաբար լեզուն ուրիշ լեզուներու մայր ու պսակն է՝ իր ազնվութեամբն ու ճոխութեամբը. և ինչպես լատին լեզուն, հելենացին ու պարսիկը, անթիվ գեղեցկութիւններ կը պարունակեն, որպէս կ'ըսեն քաջ լեզվագետներ, բայց ինչպէս կարելի ըլլա քիչ ատենի մը մեջ տարածել այնպիսի լեզու մը, զոր ազգին մեջ խիստ քիչ մարդ կը գտնվի հասկցող և բազմապատիկ պակաս գրող»²:

Աշխարհաբարը ինչ արժանիքներ ուներ իր ըմբռնած «հասարակաց լեզու»-ն դառնալու համար: Օտյանը կանգ էր առնում հիմնականում աշխարհաբարի հետևյալ արժանիքների վրա: Ամենից առաջ, շինելով հանդերձ ճոխ, վայելուչ և հարգի մի լեզու, հասկանալի էր հասարակութեան բոլոր խավերի կողմից: Երկրորդ՝ աշխարհաբարը կենսունակ էր, չնայած իր աղավաղմանը, մեծ հեռանկարներ ուներ դառնալու և մաքրվելու, և վերջապէս, շափազանց հեշտ էր աշխարհաբարի ուսուցումը դպրոցներում, քան գրաբարինը, որի միայն քերականութիւնը երկար տարիներ բխացնում էր աշակերտների ուղեղը:

Բայց ո՞րն էր դառնալու Օտյանի պատկերացրած «հասարա-

¹ Գ. Օտյան. «Առաջարկութեան աշխարհաբար լեզվի վրա», Կ. Պոլիս, 1881 թ., էջ 1.

² Նույն տեղ, էջ 4—5:

կաց լեզվի» հիմքը: Հայությունը Թյուրքիայում խոսում էր բազմաթիվ բարբառներով: Կ. Պոլսի մտավորականության մի մասը, այդ թվում և Գր. Օտյանը ծանոթ չէին գավառի լեզուների բարեմասնություններին: Այդ լեզուները լսում էին միայն Պոլսում ապրող գավառացիների բերանից, առօրյա խոսակցական մի քանի ընդհանուր նախադասությունների մեջ: Դրա համար էլ Պոլսի մտավորականության հատկապես այն մասի համար, որոնց ընտանիքները գավառից չէին գաղթել, գավառի լեզուն առավել կոշտ ու կոպիտ էր թվում, թերի, աղճատված: Եվ որովհետև ըստ Գր. Օտյանի, մյուս կողմից՝ վանեցին պոլսեցու լեզուն լավ չէր հասկանում, պոլսեցին էլ վանեցու, երևանցին ջուղայեցու և փոխադարձաբար, ուստի նա անհրաժեշտ էր համարում հիմք ընդունել Պոլսի աշխարհաբարը, այն լեզուն, որով խոսողների թիվը համեմատաբար ավելի շատ էր հայության մեջ, մանավանդ, որ իբր թե Պոլսում բավականաչափ կոկիված էր ու գրական աստիճանի բարձրացված այդ լեզուն:

«Դարձյալ՝ Պոլսի աշխարհաբարն ընտրելով, այս ալ կը շահինք, — գրում էր նա, — որ Պոլիս Օսմանյան տերության մայրաքաղաքն ըլլալու համար, հայաբնակ տեղերուն իբրև կեդրոնը սեպվելով, ավելի դյուրութուն կընծայե իր խոսած աշխարհաբարը ուրիշ տեղեր տարածելու, որովհետև ամեն կողմեն բազմաթիվ հայեր կուգան Պոլիս, և տարիներով կը կենան: Այս պատճառով, երբ մեր խոսած լեզուն տարածելու ջանք ըլլալ սկսվի, հոս հաճախող դրսեցի հայերն ալ վարժելով մեր աշխարհաբարին, իրենց հետ Պոլսի հայերենն ալ կը տանին իրենց երկիրը»¹:

Ընդունելով հանդերձ Պոլսի հայերենի առավելությունները գավառաբարբառների նկատմամբ, Օտյանը այնուամենայնիվ այդ լեզվի մեջ էլ տեսնում էր խոշոր թերություններ, այն համարում էր շատ անկարգ, «շատ ալ օտար ու մուրացած ոճեր ու բառեր» պարունակող: Հետևաբար, անհրաժեշտ էր նախ լուրջ ու տևական աշխատանք կատարել այդ լեզուն հարդարելու, կոկելու, օտար բառերն ու ոճերը դուրս գցելու ուղղությամբ, պետք էր գտել այն «ինչպես կզտեն արծաթը հողեն և գրաբարի մի շարք գեղեցկությունները պատվաստել աշխարհաբարին»:

¹ «Առաջարկություն», էջ 8:

Ըստ Օտյանի՝ կյանքը ինքնին ոչ միայն թելադրում էր այդ պահանջը, այլև կատարում էր այն: Օրեցօր կոկիվում էր Պոլսի աշխարհաբարը, մամուլի էջերում հղկվում, զտվում: Կ. Պոլսի մտավորականության պարտականությունն էր միայն արագացնել այդ պրոցեսը, մի կողմից՝ մամուլում և հրատարակությունների մեջ, մյուս կողմից՝ մշակելով ու տարածելով աշխարհաբարի քերականությունը, որպեսզի, ինչպես նա էր ասում, ամեն մարդ իր խելքին փշած ձևով շփորձի գրել նոր լեզուն: Եվ արդարև, այդ թվերին, նույնիսկ դրանից մի երկու տասնյակ տարի հետո, Կ. Պոլսում դրժվար էր միասնական նորմաների ենթարկվող լեզու գտնել: Ռուսի-նյանը գրում էր իր հասկացած լեզվով, Գր. Օտյանը՝ տարբեր, «Մասիս»-ի խմբագիր Կ. Ութուջյանն ուներ իր ուրույն լեզուն, Մատթեոս Մամուրջյանը իր լեզուն և այլն:

Ահա թե ինչու նոր լեզուն զտելու, մաքրելու շափ անհրաժեշտություն էր ընդհանուր օրենքներ սահմանող մի աշխատության հրապարակ գալը: Օտյանը այդ անհրաժեշտությունը չէր սահմանափակում միայն քերականության ձեռնարկի պատրաստումով: Այդ դեռ մի կողմն էր, անհրաժեշտ էր նաև ուժեղ կոնտրոլ թյուրքիայում հրատարակվող հայերեն գրքերի վրա: Նա պահանջում էր, որ ոչ մի գիրք չհրատարակվի առանց պատրիարքարանի կողմից ստեղծված մշտական մի հանձնաժողովի համաձայնության, իսկ այդ հանձնաժողովի ֆունկցիան էր լինելու մի ընդհանուր հայտա-րարի բերել աշխարհաբարի տարբեր երանգներով գրված գրքերը:

Ահա սրանք են հիմնականում Գ. Օտյանի լեզվագիտական ըմբռնումները, նրա կարծիքը նոր լեզվի ստեղծման մասին:

Ինչպես մեր բերած մեջբերումներից երևում է, Օտյանը ամուր կապերով կապված էր եկեղեցական լեզվին, գրաբարին. նա, աշխարհաբարը «հախարակաց լեզու» դարձնելով հանդերձ, մեծ զգուշությամբ ու երկյուղածությամբ էր մոտենում այն լեզվին, որով գրված էին հայոց եկեղեցու աղոթքներն ու շարականները, աստվածաշունչը, որին նա մինչև իր կյանքի վերջը մնաց մոլեռանդ երկրպագու:

Վերջ ի վերջո ո՞րն էր Օտյանի ելակետը, նա գրաբարյա՞ն էր, թե աշխարհաբարյան, այլ խոսքով՝ հայոց լեզվի ապագան նա կապում էր գրո՞ց լեզվի, թե՞ ժողովրդի խոսակցական լեզվի հետ:

Արևմտահայ լեզվի դարգացման պատմության մասին զբաղվող մարդիկ, մեր կարծիքով այս հարցի վրա անհրաժեշտ ուշադրություն չեն դարձրել և անվերապահորեն Գր. Օտյանին հռչակել են հետևողական աշխարհաբարյան, նոր լեզվի առաջին համոզված պաշտպաններից ու ջատագույններից մեկը:

Իրականությունը տարբեր է: Օտյանի հիշյալ աշխատության, ինչպես նաև նրա առհասարակ ստորագրած գրական, քննադատական էջերի մանրամասն ուսումնասիրությունը մեզ բերում է այն հաստատ համոզման, որ աշխարհաբարը նրա մոտ ոչ թե նպատակ է, այլ միջոց, և այն էլ միջոց է ոչ միայն հայ բուրժուազիայի փայփայած նպատակներին հասնելու համար, որը շատ բնական ու հասկանալի է, այլ միջոց՝ գրաբարին մոտենալու համար: Հենց այս է Օտյանի լեզվագիտական ըմբռնումների աքիլեսյան գարշապարը, և այդ հատուկ է ոչ միայն Օտյանին, այլև՝ մինչև 80-ական թվականների մտավորական սերնդի հրապարակ դալը՝ գրեթե բոլոր աշխարհաբարյաններին:

Մեր ասածը ավելի ևս հիմնավորելու համար բերենք մի վերջին մեջբերում Գր. Օտյանից.

«Աշխարհաբարը, — գրում էր նա, — հիմա այնպիսի հետախաղաց վիճակի մը մեջ է, որ ետ ետ քշվելով, գրաբարեն հեռանալու և բոլորովին խանգարման վիճը անկնելու վրա է, և կը վախցվի, որ օր մը գահավիժի այն վճին մեջ, և այն ատեն վերականգնելն անկարելի ըլլա. մենք այնպիսի համբու մը վրա կ'առաջարկենք հաստատել զ'այն, որ փոխանակ ետ ետ երթալու, առաջ ընթանա և գրաբարին ծոցը դիմե»¹: (Ընդգծումները մերն է. — Գ. Ստ.):

Նույն այս միտքը Օտյանը ձևակերպել է այլ առիթով հետևյալ արտահայտությամբ. «Քչիկ քչիկ աշխարհաբարը պետք է ընտելցնե մեզի գրաբար լեզուն»:

Գր. Օտյանից միանգամայն տարբեր ձևով, բայց նույն սկզբունքների պաշտպանությամբ, հախուռն ու համարձակ գրապաշարի մեջ նետվեց 60-ական թվականների մտավորական սերնդի ամենակարկառուն ղեմքերից մեկը, բանաստեղծ, հրապարակախոս, հայտնի հասարակական գործիչ Նահապետ Ռուսինյանը, որ իր կրթությունն ստացել էր Փարիզում, տեսել 1848 թվի

¹ «Առաջարկություն», էջ 11:

Ֆրանսիական ռևոլյուցիան ու, վերադառնալով Պոլիս, մշակում էր կյանքը հիմքից վերափոխելու երազային ծրագրեր: Նա՝ մասնակցելով ազգային կյանքին, ցանկանում էր մոգական գավազանի մեկ հարվածով հայ ժողովրդին դուրս բերել տգիտության ու խավարի ճիրաններից, ուսում ու կրթություն տարածել ամեն կողմ և, որ ամենից կարևորն է, ստեղծել նոր՝ բոլորի համար հասկանալի մի հաղորդակցության միջոց, ստեղծել աշխարհաբարի քերականությունը, սահմանել նրա զարգացման նորմաները:

1853 թվին լույս է տեսնում Ռուսինյանի գրած և Ուսումնական խորհրդի մշուս անդամների՝ Գր. Օտյանի, Թնկրյանի համաձայնությունն արժանացած մի փոքրիկ բրոշյուր «Ուղղախոսություն արդի հայ լեզվի» վերտառությամբ: Այդ բրոշյուրի վրա շերտված հեղինակի անունը և այդ կատարվել էր դիտավորյալ, որպեսզի այն չհամարվեր մի անհատի կարծիքը, այլ պարտադիր դառնար բոլոր դպրոցների համար՝ որպես պատրիարքարանին կից գործող Ուսումնական խորհրդի կողմից սահմանված նորմաների մի ժողովածու: Այդպես էլ դրված էր գրքի շապկի վրա, թե նա հրատարակվում է Ուսումնական խորհրդի կողմից:

Չնայած իր վերնագրին, Ռուսինյանի գիրքը ոչ թե ուղղախոսություն էր, այլ արևմտահայ աշխարհաբար լեզվի առաջին քերականության փորձը: Ռուսինյանը՝ փոխանակ օրինականացնելու, դիտական հիմնավորում տալու արդեն ձևավորման պրոցեսում գտնվող արևմտահայ աշխարհաբարին, ձգտելու վերացնել նրա դարաուղությունները, սահմանելու միասնական ձևերը, չհավանելով գոյություն ունեցող աշխարհաբարին, թույլ և տկար համարելով այն, փորձում էր առաջարկել իր քմբռնած ուղղագրությամբ ու քերականությամբ մի լեզու, այսպիսով կատարելով միանգամայն քմահաճ, ոչնչով չհիմնավորվող այնպիսի առաջարկներ, որոնք ծիծաղելի էին թվում ոչ միայն գրաբարյաններին, այլև շատ աշխարհաբարյանների: Նրա առաջարկած լեզվով չգրեցին նույնիսկ այն մարդիկ, որոնք խմբագրել ու հավանություն էին տվել այդ գրքին, Գր. Օտյանը և մյուսները:

Մեր նյութից դուրս է Ռուսինյանի նորամուծությունների մանրամասն նկարագրությունը: Հայոց լեզվի մեջ խոշոր հեղաշրջում կատարելու ձգտում ունեցող այդ առաջարկներից մի քանիսին միայն մենք կժանոթանանք ստորև:

Լեզվագիտական ի՛նչ ըմբռնումներ ունեն Ռուսինյանը: Ինչպե՛ս էր հասկանում լեզվի ֆունկցիան, նրա դերը հասարակական կյանքում, նրա առաջացման, զարգացման ընթացքը, նրա կապը այլ լեզուների հետ և այլն:

Ռուսինյանի լեզվագիտական ըմբռնումները շարադրված են հիշյալ «Ուղղախոսության» ընդարձակ առաջաբանում, որը հանդիսանում է հայոց լեզվի պատմության ուշագրավ էջերից մեկը և շատ կողմերով հիշեցնում է Գր. Օտյանի արդեն մեզ ծանոթ «Առաջարկության» դրույթները:

Ռուսինյանի պահանջը նույնն էր, ինչ որ Գր. Օտյանինը, այսինքն՝ գրաբարի փոխարեն դրական լեզու դարձնել ժողովրդի խոսած լեզուն: Նա իր այս գրքի առաջաբանում զարգացնում էր այն միտքը, թե լեզուները դարերի ընթացքում փոփոխվում են, միշտ հարաշարժ դրության մեջ են, ենթարկվում են հապավումների, աղճատումների, փոփոխվում է այն աստիճան, որ մի քանի դար հետո անհնար է դառնում տվյալ լեզուն համեմատել իր նախորդի հետ: Այդպես է պատահել հունարենի, լատիներենի և ուրիշ լեզուների հետ: Մյուս կողմից՝ լեզուների այս տեսական փոփոխությունը պայմանավորված է «Նորանոր գաղափարներու, իմաստ հայտնող բառերու ավելանալովը»¹, հետևաբար, երբ լեզուն իր զարգացման որոշ աստիճանում այլևս ետ է մնում կյանքից, չի բավարարում մարդկանց պահանջները, պետք է դադարի գոյություն ունենալուց, պետք է իր տեղը զիջի նոր լեզվին: Անհրաժեշտ է թողնել տրադիցիան, դերի շղապնալ հնի ստեղծած գեղեցկություններին և մշակել թեև թույլ, բայց կենսունակ, զարգացման հեռանկարներ ունեցող նոր լեզուն, որը տվյալ դեպքում հայոց լեզվի համար հանդիսանում է աշխարհաբարը: Լեզվի նպատակը ժողովրդի տարբեր խավերի միջև կապ ստեղծելն է՝ ժողովրդին դաստիարակելու, կրթելու, լուսավորելու համար: Կա երկու միջոց՝ «Կամ ամբողջ ազգի մը ուսմկին՝ իր հին ու քանի մ'ուսումնականներու հասկցած լեզո՛ւն ուսուցել, կամ ուսմկին նույն ասեն խոսած լեզվո՛վը գրեւ»²: Առաջինը Ռուսինյանը համարում էր միանգամայն անբնական, ծիծաղելի, անհնարին բան: Ինչպես Օտյանն էր նշում, այդ

¹ «Ուղղախոսութիւն», Կ. Պոլիս, 1853, էջ Ա:

² Նույն տեղ, էջ Բ:

կապահանջեր երկար դարեր: Այդ եղբակացութեան հանդէլ էին նաև Եմբրոպական մի շարք երկրներ՝ իրենց վարժարաններում լատիներենի փոխարեն տեղական խոսակցական լեզուները մտցնելով: Պետք էր հետևել նրանց պրակտիկային: Անհրաժեշտ էր հիշել, որ «Եմբրոպայի մեջ ժողովուրդ մը չը կա, որ խոսած լեզվովը չը գրեն ու շուանե իրեն պետք եղած բաները»¹:

Ընդունելով դրաբար լեզվի մի շարք առավելութիւնները, նրա դեղեցկութիւնը, հարստութիւնը, այն համարելով հանդերձ «վսեմ» լեզու, Ռուսինյանը գտնում էր, որ այժմ, միևնույն է այդ լեզուն այնքան է հեռացել ժողովրդից, որ ինքը չի էլ համարձակվում համարել լեզու, քանի որ նա այլևս չի կատարում լեզվի ֆունկցիա, միայն որպէս զարդ է դորժածվում, մինչդեռ հայ ժողովրդի հասարակական կյանքը անհրաժեշտութիւն է ներկայացնում ոչ թե զարդի, այլ պրակտիկ նշանակութիւն ունեցող մի լեզվի, որը նրան հնարավորութիւն տա մտավորական բարձրաստիճանի հասնելու: Ունի՞ դրա համար հայ ժողովուրդը հնարավորութիւններ: Անշուշտ՝ «Ազգն իր հին կորուսած լեզվին տեղ ունե ասոր, թե ո՛չ կատարյալ, գեթ բավական դորժածելի արդի լեզու մը, ազգային, զոր շատ մարդիկ իրարմե քիչ տարբերութեամբ կը գրեն, ու հասարակութիւնը՝ քանի կ'երթա վարժ ու անուշ կերպով կը խոսի»²:

Ռուսինյանի տկնարկած «անուշ» լեզուն, որը պետք է բարձրանար դրական աստիճանի, դարձյալ պոլսահայերի խոսակցական լեզուն էր: Նրա սխալը մնաց այն, որ իր շրջանի լիբերալ բուրժուական գրողների նման, չկարողացավ ազատագրվել Պոլսի մեշշական նական լեզուն դրականի բարձրացնելու դադափարից: Չնայած այն բանին, որ նա քնդունում էր, թե Պոլսում խոսվող հայերենը «ավելի խառն է օտար բառերով, քան ուրիշ տեղացոց հայերենը» սակայն խանդավառվում էր այն բանով, որ «արտասանութեան կտրմենն ավելի հստակ ու ավելի մաքուր ըլլալեն դատ, երկու գլխավոր պատճառներ կը վավերացնեն անոր նախապատվութիւնը»:

Որո՞նք էին այդ «նախապատվութիւնները»: Նախ՝ իբր թե Պոլս-

1 «Ուղղախօսութիւն», Կ. Պոլիս, 1853, էջ Գ:

2 Նույն տեղ, էջ Գ—Դ:

սի հայերենը ավելի լայն տարածում ուներ, քան որևէ բարբառ, թե ազգի մեծագույն մասը խոսում էր այդ լեզվով, համարյա ընդհանուր էր շատ հայերի համար: Երկրորդ՝ մայրաքաղաքի լեզուն շատ ավելի հեշտ ճանապարհով կարող էր տարածվել, թափանցել բոլոր գավառները, քան որևէ բարբառ, որովհետև գավառացիները Պոլիս այցելելով՝ հեշտությամբ կարող էին սովորել և փերադառնալ իրենց հայրենիքը և տարածել այնտեղ:

Այս երկու փաստարկումներն էլ գրեթե նույնությամբ գալիս էին Գր. Օտյանից: Նույն կարծիքին էին նաև շատ ու շատ ուրիշ աշխարհաբարյաններ: Ուստի ավելորդ չէ, դուցե, քննության առնել այս նկատառումները:

Առաջին փաստարկումը միանգամայն թյուրիմացություն էր, սխալ: Պոլսում չկար այնպիսի խոսակցական ընդհանուր լեզու, որը գործածական լիներ ժողովրդի մեծամասնության համար:

Պոլսի նախնական սակավաթիվ հայությունը մեծացել, վիթխարի թիվ էր կազմել ոչ այնքան բնական աճի հետևանքով, որքան գավառներից տասնյակ հազարներով այնտեղ լցվող հայության թվի ավելացումով: Հայտնի է, որ Պոլիսը, հատկապես տոկոսրական հարաբերությունների դարգացման շնորհիվ դարձել էր գավառի մանրանկարը: Այնտեղ փոքրիկ «գաղութիկներ» ունեին, եթե կարելի է այդպես անվանել, Տաճկաստանի հայաբնակ գրեթե բոլոր գավառները: Մի կողմից՝ տասնյակ հազարավոր պանդուխտներ՝ թողած իրենց հայրենի երկիրը, տնտեսական ծանր պայմանների պատճառով եկել, լցվել էին Պոլիս ու այնտեղ ամենաշարքաշ կյանք էին վարում մի կտոր շոր հաց ճարելու, մի քանի կոպեկ իրենց երեխաներին ուղարկելու համար, մյուս կողմից՝ բազմաթիվ գավառներից ընդունիքներով հոծ հայություն նույն ճնշումների հետևանքով տեղափոխվում էր Պոլիս, հաստատվում Օսմանյան կայսրության մայրաքաղաքում, որտեղ այնուամենայնիվ հալածանքն ու կոտորածը այնքան ուղղակի չէր, ինչպես գավառներում: Այդ գաղթականները Պոլսում ապրում էին խմբերով, շատ հաճախ նույն գավառի հայ ընտանիքների մեծ մասը ապրում էր Պոլսի միևնույն թաղամասում, որոնք ընդհանուր առմամբ կոչվում էին գյուղեր: Օրթագյուղ, Մաքրիգյուղ, Միջնագյուղ և այլն:

Այնպիսի մի քաղաքում, ինչպիսին էր Պոլիսը, որտեղ հայոց լեզուն ոչ պետականության իրավունք էր վայելում և ոչ էլ որևէ

պետական հիմնարկի կողմից կոնտրոլի տակ էր, դժվարութեամբ կարող էր դառնալ բոլորի համար պարտադիր և ընդհանուր լեզու: Մեր հիշած գաղթականական խմբերը, պարփակված իրենց մեջ, բոլորովին էլ հարկադրված չէին ենթարկվելու, ասենք, Բերա թաղամասի հայ մեշչանական լեզվի ազդեցութեանը: Պոլսում ապրող մի քանի տասնյակ հազար բեռնակիրները ևս, որոնք կտրված էին մամուլից, անգրագետ մշակներ էին ու հայոց լեզուն, այն էլ գրաբարը, լսում էին եկեղեցում ժամերգութեան պահին, խոսում էին բացառապես իրենց գավառի լեզվով: Մշեցին խոսում էր մշեցոյ բարբառով, վանեցին՝ վանեցոյ և այլն:

Պանդուխտների այս հոսանքին զուգահեռ գավառից Պոլիս էին թափվել թյուրքական բեկերի ճնշումներից, հալածանքներից փախած բազմաթիվ հայ ընտանիքներ, նույնիսկ մեծ թվով կալվածատերեր, հայ ազնվականության վերջին մոհիկանները հանդիսացող ամիրայական շատ տներ, մասնավորապես՝ Ակնից: Հարուստ այս խավի լեզուն ևս մնում էր գավառաբարբառը: Ակնցի բոլոր ամիրայական տների խոսակցական լեզուն, դասակարգային որոշ երանգավորումով հանդերձ, հիմնականում Ակնա բարբառն էր, որը անհամեմատ ավելի կենսունակ էր հայ ժողովրդի մի մեծ հատվածում: Ակնցի հայ ամիրաները նույնիսկ գրական շրջանակներում, պատրիարքարանում հրավիրված ժողովներում խոսում էին բացառապես Ակնա բարբառով: Բազմաթիվ վավերագրեր են հասել մեզ մեր այս թեզը հաստատող:

Ոչ մի համեմատություն չէր կարող լինել դարավոր անցյալ ունեցող ժողովրդի մեջ խոր արմատ գցած, օտարաբանություններից անհամեմատ դերձ, կենսունակ հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության գոհարներով առկեցուն հիշյալ գավառաբարբառների ու 19-րդ դարի կեսերին արդեն միանգամայն աղճատված, թյուրքերեն ու ֆրանսերեն բառերով ու ոճերով ողողված, իր դեմքը գրեթե կորցրած Պոլսի խոսակցական լեզվի միջև: Անհնար էր ոչ միայն վերջինիս տիրապետող ազդեցությունը գավառական լեզուների վրա, այլև այդ լեզվի՝ նույնութեամբ գրականության բարձրանալը: Եվ եթե, այնուամենայնիվ, ընդունված է կարծել, թե Պոլսի լեզուն է, որ հետագայում վերամշակվելով դարձավ արևմտահայ գրական ընդհանուր լեզու, ապա պետք է ընդունել, որ այս կարծիքը հայտնողները մոռանում են մի բան, որ և՛ Պոլսի այդ լեզուն



մշակողները հիմնականում եղել են գավառացի մտավորականները և գերազանցապես ակնցի գրողները, որոնք խոշոր ներգրում են կատարել պոլսահայ լեզվի մեջ՝ իրենց բարբառից բերելով, գրականացնելով բազմաթիվ ոճեր, դարձվածքներ, արտահայտություններ:

Բավական է միայն հիշեցնել, որ արևմտահայ այնպիսի աչքի ընկնող գրողներ, հրապարակախոսներ, ինչպիսիք են՝ Արփիար Արփիարյանը, Գր. Զոհրապը, Տ. Արփիարյանը, Մինաս Չերազը, Եվփիմե Ավետիսյանը, Մ. Մեծարենցը, Սիամանթոն և ուրիշներ, բոլորն էլ ակնցի են և դժվար է նրանց լեզվի մասին խոսել առանց ցույց տալու Ակնա բարբառի ուժեղ ազդեցությունը:

Նահապետ Ռուսինյանի և Գր. Օտյանի երկրորդ փաստարկումը, թե պանդուխտները Պոլիս գալով՝ կարող էին սովորել պոլսահայ լեզուն և վերադառնալ իրենց հայրենիքը ու տարածել այնտեղ, համարյա ժխտվեց նրանց առաջին փաստարկման քննությամբ: Գավառի և Պոլսի միջև այդ կապը նկատելի էր հատկապես պանդուխտների մոտ, որոնց թիվը Պոլսում հասնում էր ավելի քան 30 հազարի:

Ինչու՞ համար այդ պանդուխտները չէին կարող սովորել բուն Պոլսի խոսակցական լեզուն և այն տարածել իրենց ապրած քաղաքներում: Նախ՝ պանդուխտների այս հոծ բազմությունները Կ. Պոլսում ցրված չէին, զարմանալի կերպով, և այդ միանգամայն հասկանալի է, սիրում էին ապրել խմբերով և ապրում էին մեծ մասամբ խաներում ու հանրակացարաններում: Նրանք սիրում էին լինել իրենց հայրենակիցների հետ, իրենց ուրախությունն ու դժբախտությունը բաժանել միմյանց հետ, նեղ օրերին օգնել մեկ մեկի: Նրանցից շատ շատերը, որոնք Պոլսում ապրում էին նույն սենյակներում, երբեմն միատեղ ճաշում, եկել էին գավառի նույն քաղաքներից, նույն գյուղերից և շատ հաճախ ազգական էին միմյանց: Հասկանալի է, որ մայրաքաղաքում նրանց խոսակցական լեզուն բացառապես իրենց գավառաբարբառն էր, և ոչ միայն լեզուն, այլև նրանց կենցաղը, սովորությունը, առօրյան գավառական էր: Դրա մեջ դեռ նրանք փայփայում էին իրենց հայրենիքի, իրենց ընտանիքի կարոտն ու երազը:

Այսպիսով Ն. Ռուսինյանի և Գր. Օտյանի առաջ քաշած երկու նկատառումներն էլ զուրկ էին որևէ հիմքից:

Կ. Պոլսի խոսակցական լեզուն ընդունելով արևմտահայության համարմի ընդհանուր լեզվի նախատիպարը, Ն. Ռուսինյանը դժգոհ էր այն բանից, որ այդ լեզուն զարգանում է շատ անկանոն։ Օտյանի նման նա էլ անհանգստությամբ է դիտում, որ յուրաքանչյուր անձնավորություն դրում է յուր ուզած և հասկացած ձևով։

«Աս ետքի պատճառը,—դրում էր նա,—անա՛նկ անպատեհություն մըն է, որ կրնա՛ լեզուն շատ դժար ու անկանոն ընել ատենով. վասնզի ժամանակը հաստատությո՛ւն կուտա սովորության հնարած կերպ կերպ այլընդակ կիրառություններուն»¹։

Ահա այս հոգսով էր, որ Ռուսինյանը ձեռնարկում էր ստեղծել պոլսահայ լեզվի քերականությունը և այն ցանկանում էր պարտադրել բոլորին։

«Արդ՝ աս արդի լեզուն կանոնավորելու, և միանգամայն կատարելության շավղին մեջ քայլ մ'առաջ մղելու մտքո՛վ է, այսինքրն՝ անոր ավելի պարզություն, ճշտություն, անուշություն, ուղղագրությունը դյուրություն ու բառերուն համառոտություն տալու մտքո՛վ է, որ ձեռք զարկինք ուսումնական անձերու խորհրդակցությամբ, ուղղախոսություն մը հորինելու նույն լեզվին»²։

Իր ցանկության հակառակ, սակայն, Ռուսինյանի աշխատությունը ոչ միայն չկարողացավ լեզվի մեջ պարզություն, ճշտություն, անուշություն մտցնել, հեշտացնել ուղղագրությունը, այլ միանգամայն հակառակ արդյունքի հասավ, ավելի բարդացնելով, խճճելով, դժվարացնելով թե այդ լեզվի քերականությունը և թե ուղղագրությունը։

Ամենից առաջ Ռուսինյանը հայոց լեզվի գոյականների ճնշող մասը ենթարկում էր մի հոլովման. այն փոքրաթիվ բառերը, որոնք չէին ենթարկվում այդ կանոնին, համարում էր զարտուղություն։ Հենց այս զարտուղությունների մեջ էլ Ռուսինյանը ավելի խճճվում էր։ Մի կողմից ցանկանում էր գրաբարի հոլովական տարբերությունները նվազեցնել, մյուս կողմից՝ հենց ինքը հարկադրված էր լինում ստեղծել միանգամայն նոր և արտառոց հոլովներ, որոնք ոչ գրաբարում առկա էին, ոչ Պոլսի հայերե-

¹ «Ուղղախոսութիւն», էջ 6։

² Նույն տեղում։

նում է ոչ էլ որևէ դավառաբարբառում: Այսպես՝ այդ բառը ցանկանալով ազատագրել գրաբարյան դժվար հոլովական ձևերից և մոտեցնել մյուս հոլովներին, հոլովում էր՝ այդ, արոջ, արոջմէ, այրով: Նույն ձևով և բույր, բուր, հորբուր (հորաքրոջ ասելու փոխարեն) և այլն:

Ռուսինյանը հոգնակի թիվը կազմում էր էր կամ նէր մասնիկների ավելացումով:

Ռուսինյանի մոտ թվականներն ունեն, բացի սովորական մեկ, երկու, երեք, չորս և այլ ձևերից, նաև՝ մի, երկ, եռ, քառ. ձևերը: Ըստ այնմ էլ դասականները լինում են միորդ, երկրորդ, եռորդ և այլն:

Դերանունները համարյա մնում են նույն պոլսահայ բարբառի ձևը (ես, իմ, ինձի, ինէ, ինով, մենե, մենով):

Ուշագրավ է դերանունների երրորդ դեմքի հոլովումը, որ նույնպես քմահաճ և ոչնչով չպատճառաբանվող նորամուծություն էր:

Ուղ. հալց.— նա նաոնք

Ըստ. ար.— նաոր նաոնց

Բաց.— նակե նաոնցմէ

Գործ.— նաով նաոնցմով¹:

Անշուշտ դերանունների այս հոլովման մեջ կար բարբառների ազդեցությունը (սկե, նկէ, սվով, նվով), բայց հիմնականում այդ հոլովումը խարսխված չէր ոչ կ. Պոլսի խոսակցական լեզվի և ոչ էլ որևէ բարբառի վրա:

Ն. Ռուսինյանը բայերի երրորդ լծորդությունը ձգտում էր սահմանադատել գրաբարից, սակայն ընդունում էր գրաբար շատ ձևեր, օրինակ՝ էգիտ (գտավ), էուս (սովորեց), էհարց (հարցրեց) և այլն:

«Ուղղախօսութիւն»-ը քմահաճ փոփոխություններ էր առաջարկում նաև ուղղագրության մեջ: Բացի այն, որ բազմաթիվ բառեր Ռուսինյանը գրում էր հապավված տառերով, այդ բառերը կարճացնելու համար (ինչպես, հարաբերականի փոխարեն՝ հարբերական, նանաչելու փոխարեն՝ նանչել և այլն), փոփոխություններ էր մտցնում նաև բուն ուղղագրության մեջ:

¹ «Ուղղախօսութիւն», էջ 19:

Բոլոր՝ էլ վերջացող բայերի անորոշ ձևը գրում էր է-ով կրել, լսել, ֆննել, ընել և այլն:

Բառամիջում երկու բաղաձայնների միջև գրում էր ը (հատկառնալի, մըտքի և այլն):

Ը համը տառը գրում էր նաև ս-ից առաջ (ըսկիզբ, ըստանալ և այլն):

Բոլոր՝-քյուն վերջացող գոյականների սեռական հոլովը գրում էր ոչ թե՝ -թեան, այլ -թիան (գիտութիան, դյուրութիան, խորհրդակցութիան և այլն):

Ռուսինյանի գիրքը Կ. Պոլսում մեծ իրարանցում և դժգոհություն առաջ բերեց: Հատկապես պահպանողական բանակը միանգամից ոտքի կանգնեց ի տես այս արտառոց նորամուծությունների: Պատրիարքարանը հարկադրված եղավ արգելել նրա դասավանդումը դպրոցներում:

Ռուսինյանը ոչ միայն չվհատվեց այս անհաջողությունից, այլ երկու տարի անց՝ 1855 թվին, կատարեց ոչ նվազ հանդուգն մի քայլ, հրատարակեց իր հայտնի «Տարեցույցը», որտեղ հետևելով ֆրանսիական ուղղության օրերին ֆրանսերեն լեզվի մեջ կատարված ռեֆորմներին, հենց ֆրանսերենի նմանողությամբ փոխեց հայերեն ամսանունների և տարվա եղանակների անունները:

Առաջարկում էր ամսանունները կոչել հետևյալ հերթականությամբ. միամիս, երկամիս, եռամիս, քառամիս, հնգամիս, վեցամիս, յոթամիս, ութամիս, ինամիս, տասամիս, տասմիամիս, տասերկամիս:

Նույն ամսանունները ըստ տարվա շորս եղանակների առաջարկում էր փոխել այսպես՝ գարնան ամիսները կոչել՝ բուսին, ծաղկին, մարգին, ամռան ամիսները՝ հնձար, տորար, պտղա, աշնան ամիսները՝ կրոն, բափոն, մրգոն, ձմռան ամիսները՝ ձյուններ, սառներ, մրկեր¹:

Ռուսինյանի այս երկրորդ քայլը ավելի ուժգին շարժեց պահպանողական ճահիճը: Ընդհանուր ցասումն ու իրարանցումն այնտեղ հասավ, որ պատրիարքարանն ստիպված եղավ հատուկ շրջաբերականով ոչ միայն արգելել Ռուսինյանի գրքերի օգտագործումը:

1 «Հանդէս ամսօրեայ», ԺԶ տարի, 1902, ապրիլ, էջ 104:

դպրոցներում, այլ՝ առհասարակ հանել այն հրապարակից, և՛ որ ամենից կարևորն է, պատրիարքարանը ցանկացավ այս առիթով իր վերաբերմունքը հայտնել աշխարհաբար լեզվի ձևավորման մասին: Այդ շրջաբերականը, որ տպագրվեց Կ. Պոլսի մամուլում 1855 թվականի հունվար ամսին, մանրամասնորեն խոսում էր «Ուղղախօսութեան» և «Տարեցոյցի» առանց սրբազան իշխանությունների հավանության հրապարակ գալու հանգամանքների մասին, և կանգ առնելով մանավանդ «Անոր անսովոր ոճի», «հախուռն փոփոխություններուն» կամ «նորաձևություններուն» վրա, հետևյալ տողերով էր ճշտում իր դիրքը:

«Մեր ազգին աշխարհաբար լեզվին հիմը՝ գրաբարն է, և հիմակու աշխարհաբար լեզունուս անկարգությունն ու անհամությունը մեջի օտար բառերն են. ուստի անոր մաքրությանը և գեղեցկությանը օգնել ուզողը՝ միայն պետք է, որ անոր մեջեն օտար ու խորթ բառերն ու ոճերը դուրս ձգե, ու հնար եղածին չափ անոնց տեղը գրաբար բառեր ու ոճեր մտցնելով գործածած լեզունիս մեր Երանաշնորհ նախնաց բուն լեզվին մոտեցնե: Ահա այս է այս խնդրուն վրա ազգին կամքը ու պարտքը, և այս պետք է ըլլա բոլոր ուսումնականաց ալ ջանքը ի պատիվ ազգին»¹:

Ըստ էության պատրիարքարանի տված այս ձևակերպումն էլ դրոշ դարձավ պահպանողական բանակի համար՝ գրասլաշքարի ամբողջ ընթացքում:

Անշուշտ Ռուսինյանի նորամույժ լեզվի անհաջողության պատճառը ոչ թե պատրիարքարանի միջամտությունն էր կամ հակառակորդների կատաղի հարձակումները, այլ նրա հակադիտական, քմահաճ էությունը: Ռուսինյանի առաջարկած լեզուն, որ նա կոչում էր արմեներեն, գործածվեց միայն հեղինակի կողմից՝ նրա «Ուղղախօսութեան», «Տարեցոյցի» (որը տպագրվեց նաև երկրորդ անգամ) մի քանի բանաստեղծությունների և Վ. Հյուգոյի «Ռի Պլաս» պիեսի թարգմանության մեջ:

Կ. Պոլսի աշխարհաբարը, գրական լեզու դարձնելով՝ գրաբարին մոտեցնելու կողմնակից էր նաև խորեն նարպելը: Նա՝ չնայած իր քաղմասթիվ բանաստեղծությունները, պոեմները, կամարթինից կատարած թարգմանությունները հրատարակել էր ամենախրթին գրա-

¹ «Մասիս», Կ. Պոլիս, 1855 թ. հունվարի 27:

բարով և ծաղրվել նալբանդյանի, Պարոնյանի և ուրիշների կողմից. 1861 թվին գրած «Արշակ Բ.» ողբերգությունը հասարակությանը հրամցրեց աշխարհաբարով և այդ պիեսի առաջաբանում էլ որոշեց իր դիրքը նոր լեզվի վերաբերյալ: Եթե Գր. Օտյանը, Ն. Ռուսինյանը այնուամենայնիվ այնքան էլ արհամարհանքով չէին խոսում ուսման լեզվի և այդ լեզուն գործածող ժողովրդի մասին, ապա նորեն վարդապետ Նարայելը արդեն իր դասակարգի աշխարհահայացքին հավատարիմ, շատ որոշակիորեն արտահայտում էր իր վերաբերմունքը գրաբարի ու աշխարհաբարի նկատմամբ, գրելով՝

«Պետք է բարձրեն նայիմք այսպիսի խնդիրներուն մեջ, ուսման լեզուն ինքնահաճ ցած գավառասիրությունը. մեք պետք է մեր գավառեն առաջ մեր ազգը սիրեմք, նորա պատիվը, նորա օգուտն ու շահը փնտռեմք ու նախադասեմք և ոչ եթե մեր քաղաքին կամ գաղափին երազյալ պատիվը»:

Հասկանալի է, որ այստեղ գավառ ասելով Նարայելը բացառապես հասկանում էր բուն ժողովրդական մասսաներին, իսկ ազգ ասելով՝ վերնախավին:



Ռուսինյանի և Գր. Օտյանի հարուցած վեճը սրանով չվերջացավ: Աշխարհաբարը արդեն ամուր քայլերով մտել էր կենցաղի ու գրականության մեջ,

50—60-ական թվականներին արևմտահայ հասարակական կյանքում կատարվեցին խոշոր տեղաշարժներ: Թանգիմաթի ընձեռած մասնակի ազատությունից օգտվելով՝ հայ բուրժուազիան բուռն վերելք ապրեց: Կապր Արևմուտքի հետ տվելի ընդարձակվեց, Հալեբը ստեղծեցին իրենց այսպես կոչված ազգային սահմանադրությունը, որը, հայերին խաբելու մի միջոց լինելով, հայ ժողովրդին իրավական, քաղաքական որևէ արտոնություն չտալով հանդերձ, մեծ զարկ տվեց կուլտուրական կյանքի աշխուժացմանը: Ամիրայական արխատակրատ դասակարգի տեղը բռնող հայ բուրժուազիայի կողքին իրեն զգացնել տվեց նաև պոլսահայ աշխատավորությունը, արհեստավորությունը:

Լիբերալ բուրժուազիան, օգտվելով մամուլի մասնակի ազա-

տությունից, հիմնում էր նորանոր թերթեր ու ամսագրեր, հրահրում էր ազգային ազատագրական պայքարը բռնապետության դեմ։ Ամենուրեք բացվում էին դպրոցներ, հիմնվում ընկերություններ։ Կյոթ թվերին էր, որ Պոլիս այցելելով՝ ռեզուցիոն դեմոկրատ Մ. Նալբանդյանը կազմակերպում է «Մեղու» դեմոկրատական թերթի շուրջ համախմբված երիտասարդությանը, բորբոքում պայքարը պահպանողականության դեմ։

Փարիզում Ստեփան Ռսկանը նույն թվերին հրատարակում էր իր «Արևմուտք» դեմոկրատական թերթը, որտեղ կատաղի պայքար էր մղում հայ ժողովրդին մոլորեցնելու ձգտող ռեակցիոն խավերի, մասնավորապես հոգևորականության դեմ, հանձին Գաբրիել Այվազովսկու։

Այս ամբողջ տեղաշարժի ընթացքում աշխարհաբարի պրոպագանդան բռնում էր առաջին տեղը։ Ամեն մի առիթով խոսվում էր նոր լեզվի ձևավորման անհրաժեշտության մասին, ողջունվում էր ամեն մի ձեռնարկում, որի նպատակն էր ապացուցել գրաբարի անհուսալի վիճակը և աշխարհաբարի կենսունակությունը։ Նույն Ստեփան Ռսկանը՝ իր թերթի էջերում ողջունելով Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի գաղափարները, Աբովյանին գնահատում էր հատկապես այն բանի համար, որ նա կարողացավ արարատյան բարբառը դարձնել գրական լեզու։

Ռսկանին ուրախացնում էր այն, որ Աբովյանը «կ'ընտրե ուսմիկ լեզուն և կաշխատի գրել ինչպես ռամիկը կը խոսի և այն աստիճան կը հաջողի, որ ռամիկը կարդալու սեր մը կ'ըզգա»¹։

Ռսկանի մոտ արդեն ռամիկը աշխատավոր ժողովուրդն էր, որի համար նա գրում է։ Այդ է պատճառը, որ նա ի տարբերություն լիբերալ գրողների Օտյանի և Ռուսինյանի՝ ցանկանում է «նասառակաց լեզվի» հարցը դուրս բերել արևմտահայ սահմանից և այն կապել ամբողջ հայ ժողովրդի համար մի ընդհանուր լեզու ստեղծելու անհրաժեշտության հետ։

«Ըսենք նաև թե, — գրում էր Ստեփան Ռսկանը, — պ. Աբովյանին գիրքը բանասիրական արժեք մ'ունի. և արդարև իր ոճը ռամիկներիան ըլլալով կատարելապես կը հայտնե այն ամեն փոփոխու-

¹ «Արևմուտք», 1859, № 7. էջ 54։

թյունները, որ մեր լեզուն ընդունեց ժամանակի, կլիմայի, օտարի և առօրյա դեպքերու ազդումեն: Այս փոփոխությունները միշտ խանգարում չեն կրնար սեպվիլ և հետևաբար արհամարհվիլ: Ընդհակառակը շատ հեզ ընդունելի և գովելի են: Անհնարին է, որ լեզու մը անփոփոխ մնա, վասնզի միտքը միշտ կը շարժի և լեզուն, որ թարգման է, պետք է որ հնազանդի իր շարժումներուն»¹:

Հ. Սվազյանի «Մեղուն», Գ. Չիլինգիրյանի խմբագրությամբ իզմիրում լույս տեսնող «Ծաղիկը» և ուրիշ մի քանի թերթեր ու պարբերականներ, դառնում են աշխարհաբարի դրոշակակիրը, ու «պաշտարը այնքան ուժգին բնույթ է ընդունում, որ ճարձատում, հիմքից խարխլվում է գրաբարի հազարամյա ամրոցը,

Ռուսինյանի առաջարկած քերականությունը չկարողացավ դառնալ նոր լեզվի հիմքը: Անհրաժեշտ էր աշխարհաբարը շատ ավելի հանգամանորեն ուսումնասիրելով՝ մի լուրջ ու գիտական հետազոտություն հրապարակ հանել, որը կարողանար գիտականորեն հիմնավորել աշխարհաբարի հաղթանակը, ստեղծեր նրա համար միասնական նորմաներ, տար նոր լեզվի քերականական սկզբունքները այնպիսի բարեխղճությամբ և մանրակրկիտությամբ, ինչպես տվել էին գրաբարի քերականությունը Հ. Ա. Բադրատունին, Մ. Չամչյանը, Չալխյանը և ուրիշները:

Այս խիստ օգտակար գործը կատարեց Վիեննայի Մխիթարյաններից Հ. Արսեն Այտընյանը՝ իր «Քննական քերականություն արդի հայերեն լեզվի» հայտնի աշխատության մեջ, որը լույս տեսավ Վիեննայում 1866 թվին: Այդ ստվար աշխատությանը կցված էր 340 էջից բաղկացած մի ընդարձակ ներածություն, որը ինքնին գիտական մի լուրջ հետազոտություն էր աշխարհաբարի մասին և պարունակում էր հեղինակի լեզվագիտական քննությունները: Այտընյանն իր այդ ուսումնասիրության մեջ ամենից առաջ ապացուցում էր, որ աշխարհում չկա մաքուր և աղավաղված լեզու, բոլոր լեզուներն էլ ենթակա են հարատև փոփոխության և լեզվական փոխառությունների: Փոխառությունը անխուսափելի է: Լեզուն հավիտենական կատեգորիա չէ, նրա կոշումն է օգտակար լինել մարդկանց, ուստի պատմական անհրաժեշտություն է, որ նորերը փոխարինեն հներին, եթե աշխարհաբարը

¹ «Արեմուտը», 1859, № 10, էջ 74:

գրաբարի աղավաղումն է, ապա գրաբարն էլ աղավաղումը կարող է լինել իրեն նախորդող մի լեզվի, որով խոսել են մեր նախահայրերը:

Այտրնյանն արդեն ոչ թե Օտյանի և Ռուսինյանի դեկլարատիվ հայտարարություններով, այլ համոզիչ փաստարկումներով ցույց տվեց, որ գրաբարը մեռած լեզու է, չի կարող արդի նվաճանքների հետ համընթաց քաջլել:

«Աշխարհաբարի չէ թե հիմակվան գոյությունը, այլ արդեն ծագումն ու ծնունդը մշտնջենավոր սպառնալիք մըն էր գրաբարին կենացը, ... այն կերպով՝ ինչպես շափահատ մեկն իրմե ետքն եկող մանկավույն վրա յուր գերեզմանը փորողները կը նըշ մարե: Բայց մենք հիմա մեր գրաբարին կենդանությունը շատոնց կորսված գիտնալով, կրնանք գոնե այս միսիթարությունը մեզի տալ՝ որ մեռելո վրա շաղգեր մահացու հարված»¹:

Այտրնյանը, մեկ առ մեկ հերքելով գրաբարյանների մեջ բերած փաստարկումները, թե աշխարհաբարը մեր լեզուն չէ, օտար ազդեցություն է, թե ավելորդ է գրաբարի նման մի ճոխ և հարուստ լեզվի կողքին զարգացնել ողորմելի աշխարհաբարը, որը շունի գրոց լեզվի ոչ ուժը և ոչ էլ վայելչությունը և ունի տարրեր բարբառներ, աղավաղված է օտար փոխառություններով և այլն, ցույց էր տալիս այդ քոլոր փաստարկումների հակագիտական, միամիտ մանկական էությունը, գրաբարի կրած մեծ ազդեցությունները հին լեզուներից, նրա մեջ էլ ժողովրդական բարբառների առկայությունը և եզրակացնում էր. — «Ծառատունկն յուր ծերությանը հասած է՝ երբ սերմը կը հասցնե, և ո՞վ կ'ըսե թե սերմնանալը պատճառն է ծերանալուն: Քանի որ լեզու մը լիով կենդանի է, քովեն ուրիշ նոր մը չելլեր անպատճառ՝ որ զինքը խափանե, բայց հնույն կերպարանափոխությանցն ամեն մեկ նոր փոփոխ (phase) անոր անկմանը նորանոր ստադներն են, և քանի հինը կիյնա՝ այնչափ նորը հառաջացած է. և երբ որ մեկը վերջին անկմանը կը հասնի, արդեն մյուսն ասպարեզն իրեն մնացած կը դրանե»²:

Դժբախտաբար մի վանականի համար խիղախություն նկատ-

¹ Հ. Ա. Այտրնյան, «Քննական քերականություն արդի հայերեն լեզվի», Վիեննա, 1866 էջ 279:

² Նույն տեղում, էջ 280:

վող աշխարհի տողեր գրելով հանդերձ՝ Այտընյանը, այնուամենայնիվ, չկարողացավ դալ այն եզրակացության, թե հնարավոր է աշխարհաբար լեզուն ճոխացնել և զարգացնել որպես անկախ լեզուն։ Նա էլ հենց նույն իր այդ արժեքավոր գրքում վերջ ի վերջո հակասության մեջ ընկավ և մեծ վերապահումներ կատարեց գրարարի օգտին։

«Եթե կուզես աշխարհաբար աղեկ գրել, — ասում էր նա, — գրարարը պետք է գիտնաս, եթե կուզես աշխարհաբար քաջ ու հիմնովին գրել, գրարարը պետք է քաջ ու հիմնովին գիտնալ»¹։ «Վերջապես առանց գրարարի աշխարհաբար չըլլար»¹։

Այտընյանը վախենում էր, որ աշխարհաբարը հանկարծ ապստամբության դրոշը բարձրացնելով գրարարի դեմ, ամենից առաջ կվնասեր իրեն աշխարհաբարին և կմնար անօգնական մի լեզու, անփարոս մի նավ օվկիանոսում։

Այտընյանի քերականությունը դարձավ լայն քննարկման առարկա մասնավորապես արևմտահայ մտավորականության շրջանում։ Լեզվի օրինաչափություններին քիչ թե շատ ծանոթ, զարգացած, ժողովրդին մոտ կանգնած գրողների կողմից ծափահարվելով հանդերձ, այդ քերականությունը ոմանց կողմից արժանացավ լուր դժգոհության և անտարբեր վերաբերմունքի։ Նշան մարդիկ, որ ցանկացան աշխարհաբարը զարգացնել ոչ թե այդպես ճշտված ու մշակված, հանգամանորեն ուսումնասիրված ընդարձակ քերականական օրենքներով, այլ ավելի հեշտ ու կարճ հանապարհով։ Այտընյանը, միանգամայն ճիշտ վարվելով, իր քերականության մեջ օրինականացնում էր ժողովրդի կողմից էլ գործածվող բաղմաթիվ գրարարի հոլովական ձևեր, զարտուղություններ։

Վերև հիշված աշխարհաբարյաններին թվում էր, թե հնարավոր է մի խիզախ քայլով այդ բոլոր զարտուղությունները վերացնել և ստեղծել մի միասնական քերականություն։

Այսպես էր մտածում Մինաս Չերազը։ Չնայած Ռուսինյանի փորձի տապալմանը, նրանից երկու տասնամյակ հետո՝ 1874 թվին, երբ արդեն աշխարհաբարը շատ ավելի որոշակիորեն գծել էր իր ուղին և կանգնել ավելի ամուր պատվանդանի վրա, նա՝ նեղվելով

¹ Հ. Ա. Այտընյան, «Քննական քերականություն արդի հայ լեզվի» էջ 313։

լեզվապայքարի մեջ, իր արտառոց առաջարկներով ոչ նվազ մեծ փոթորիկ պայթեցրեց Կ. Պոլսի գրական միջավայրում, քան Ռուսինյանը իր «Ուղղախօսութիւն» աշխատութեամբ: Չերազը արեւմրտահայ գրապայքարին մասնակցեց եռանդով, մի քանի տարի օրհասական պայքար մղելով գրաբարամոլների դեմ: Նա Մ. Փորթուկալյանի «Ասիա» և Պարոնյանի «Թատրոն» թերթերում գրեց բազմաթիւ հոգովածներ աշխարհաբարի օգտին¹: Նրան մեղադրեցին դոնկիխոտութեան, մանկամտութեան, տգիտութեան մեջ: Նա պահանջեց որեւէ հանձնաժողովում ավելի հանգամանորեն քննութեան առնել գրապայքարը, և այդպիսի հանձնաժողով չգտնելով, որոշեց օգտագործել վարժապետական ժողովի ամբիոնը, որի նիստերին մասնակցում էր պարբերաբար: Մի քանի ամիս շարունակ, այդ նիստերում ընդարձակ ելույթներ ունեցավ գրաբարի դեմ և պաշտպանեց աշխարհաբարը՝ ուսանողական իր տետրակի բոլոր յիստատներով և մեջբերումներով զինված²:

Չունենալով ոչ Գր. Օտյանի լեզվական, գրական կուլտուրան, ոչ Նահապետ Ռուսինյանի հեղինակութիւնը և ոչ էլ Ալտընյանի գիտական հմտութիւնը, Չերազը տապալվեց, և տապալվեց ոչ այնքան իր հակառակորդների հարվածների տակ, որքան այդ շրջանում շափաղանց թույլ էին, որքան իր նորամուծութիւնների, առաջարկութիւնների քմահաճ, հակադիտական, տղայամիտ բնույթի պատճառով:

Որո՞նք էին Մինաս Չերազի հիմնական փաստարկումները ու առաջարկութիւնները: Նա, ուսանողական հափշտակութեամբ ծանոթանալով ժամանակակից լեզվաբանութեան մի շարք ներկայացուցիչների գործերին, ծանոթանալով նաև արեւմտահայ և արեւելահայ նշանավոր դեմքերի կարծիքներին (Ն. Ռուսինյան, Գր. Օտյան, Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Ս. Նազարյանց, Մ. Աղաբեկյան, Բ. Պատկանյան և ուրիշներ), ինչպես նաև հայ ճոխ մատենագրութեանը, փորձում էր միանգամ ևս հիմնավորել այն կարծիքը, թե գրաբարը երբեք էլ աստվածային Աղամի և Եվայի լեզու չի եղել,

1 «Ասիա» և «Թատրոն» պարբերականներում լույս տեսած նրա հոգովածները հետագայում ամփոփվեցին «Գրիչ և սուր» գրքույկում:

2 Վարժապետական ժողովում նրա արտասանած ճառերն ու ելույթները ամփոփված են Չերազի «Աղգային դաստիարակութեան» գրքույկում:

թե սուրբ ու անսուրբ լեզուներ առհասարակ չկան, կան ճոխ և աղբատ լեզուներ, հին և նոր լեզուներ, և եթե մենք այսօր սիրում ենք մեր հին գրականությունն ու լեզուն, ապա սիրում ենք ոչ թե այն պատճառով, որ այդ գրականությունը ամենից լավն է, իսկ լեզուն հարուստ, այլ այն պատճառով, որ մերն է:

Խոսքը մասնավորեցնելով գրաբարին, Չերազը կրկնում էր Այտրնչանի այն կարծիքը, որ գրաբարից առաջ եղել են շատ լեզուներ, թե հենց հայ ժողովուրդը միշտ չէ, որ օգտագործել է գրաբար լեզուն, 5-րդ դարից առաջ նա գործածել է ուրիշ լեզու, նույնիսկ գրաբարի ծաղկուն շրջանում հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը չի խոսել այդ լեզվով, խոսել է բարբառներով և թե վերջի վերջո գրաբարը ինչպես կարելի է համարել մաքուր լեզու, երբ մեծ ազդեցություններ է կրել հունարենից, պարսկերենից և այլ լեզուներից:

Չերազի պայքարը ուղղված էր այն մարդկանց դեմ, որոնք գրաբարի պաշտպանությամբ ցանկանում էին ետ պահել հայ ժողովրդին իր բնական ընթացքից, նրան թողնել տգիտության ու հետամնացության մեջ: Մինչդեռ «Հայը շարժիլի պետք ունի և զոքա Սիմեոն Ճղնավորի պես զայն փտեցունել կուզեն մի սցունի վրա, զոր ոսկեդարյան փառքի կոթող կանվանեն»¹:

Եթե նույնիսկ գրաբարը մի կերպ դառնար խոսակցական լեզու, ապա նա երբեք էլ չէր կարող մնալ 5-րդ դարի «մաքուր» վիճակում, այլ հասարակական կյանքի թելադրանքով «կաղավաղվեր» բազմաթիվ փոխառություններով և անխուսափելի նորամուծություններով:

«Թե մեր ոամիկ գրաբար խոսեր այժմ, — գրում էր Չերազը, — նա որ «փենջերենեռուն համերը մուրլաղ փառլաքմիշ ըրե այսօր» կըսե, պիտի ասեր. «Այսօր ըզ համա փենջերեից մուրլախ փառլաքմիշ արա»²:

Դժբախտաբար ինչպես իր նախորդները՝ Գ. Օտյանը և Ն. Արուսիանը, Չերազն էլ՝ արտաքուստ ամենաթունոտ նիզակներ արձակելով հանդերձ գրաբարի դեմ, չկարողացավ ազատագրվել գրաբարից: Նա օգտագործում էր ոչ միայն գրաբարի բառարանը՝

¹ Մինաս Չերազ, «Գրական փորձեր», Կ. Պոլիս, 1874, էջ 58:

² Մինաս Չերազ, «Ազգային դատախարակութուն», Կ. Պոլիս, 1876, էջ 143:

շատ առատորեն, այլև քերականական բազմաթիվ ձևեր: Գրաբարի աշղպիսի հախուռն օգտագործումով էր, որ փորձեց ստեղծել իր «ընտրողական հայերենը»՝ չհավանելով ոչ մեկի լեզվին:

«Հարկադրվեցա, — գրում էր նա, — ես ինքնին կազմակերպել այն լեզուն, զոր պիտի գործածեի, ճշտել զայն վերջապես: Ռոբինզոնի վիճակին մեջ երևակայեցի զիս... Ուր գրաբարը աշխարհաբարեն ավելի բանավոր, կանոնավոր, դյուրին, պայծառ էր, գրաբարը ընդունեցա, ուր Տփղիս լավագույն էր Կոնստանդնուպոլիսեն՝ Տփղիսին հարեցա, ուր վասպուրական իրավունք ունեք և ոչ ինչաստան, վասպուրականին հետևեցա և այսպես ջանացի կազմել մի լեզու, որ կարենա ընդունելի լինի ամենուն, անձնյուր դավառ յուր երեսփոխանն ունենալով հոն»¹:

Իրականում սակայն Չերազի ստեղծած լեզվի մեջ ոչ թե «անձնյուր դավառ» ներկայացուցիչ ուներ, այլ մեծ տեղ էր տրվում գրաբարին:

«Ընտրողական հայերեն»-ի երեք էջից բաղկացած քերականությունը Չերազը հրատարակեց իր «Գրական փորձերի» և «Ազգային դաստիարակության» մեջ:

Ընդհանուր գծերով ծանոթանանք այդ տարօրինակ և խսկապես միամիտ քերականությանը, որը չնայած իր փոքր ծավալին, որով պարծենում էր հեղինակը, անշափ մեծ դժվարություններ էր մըտցրնում հայոց լեզվի քերականության և ուղղագրության մեջ,

Ռուսինյանի նման Չերազն էլ իր «ընտրողական հայերենում» աշխարհաբար լեզվի հոլովումը վերածում էր մի տեսակի և ոչ մի բացառություն չէր ճանաչում: Օրինակ՝ հաց, հացի, հայր, հայրի, ֆուր, ֆուրի, օր, օրի, քվարանություն, քվարանությունի, տեր, տերի, կին, կինի, տեսնել, տեսնելի, ուտել, ուտելի և այլն: Հոգնակի սեռականը պահում էր արևելահայերի վերջավորությունը (հացերի, հայրերի, ֆուրերի և այլն):

Աշխարհաբարում Բ տառով վերջացող բառերը, եթե գրաբարում չունեին Բ վերջավորությունը, գրում էր առանց Բ-ի: Օրինակ, խոս, միտ, ծալ, սկիզբ, փոխանակ ասելու՝ խոսֆ, միտֆ, ծալֆ, սկզբոնֆ:

Խուսափելու համար Չերազի առաջարկած նորամուծություն-

¹ «Գրական փորձեր», էջ Խ—ԽԱ:

ների մանրամասն թվարկումից, մենք այստեղ մեջ կբերենք նրա «ընտրողական հայերենով» գրված հոդվածներից մի հատված:

«Մայրական սէ՛ր. ամեն սիրտի առաջին թռիչն է այն. նովա է որ իմէնք դուրս ալ կ'ապրիմք, այս անարգ կաւէն վեր կը սլանամք, և Արարիչին շունչը կը զգամք մեր մէջ. նա մարդին մէջ անձնաւորութիւնն է սքանչանքի և գորովի, որք ըզ մեզ կը բարձրացունեն, կը վսեմացունեն, անձուկ և ցամաք նիւթէն վեր հանելով՝ բարոյական մի գերազույն էութիւնի կը մոտեցունեն, և մեզ մի Երկրորդ կեանք կը տան...»¹:

Ինչպէս տեսնում ենք, Չերազի լեզուն ոչ միայն մի քայլով առաջ չէր Ռուսինյանի, Գ. Օտյանի լեզվից, այլ կարելի է ասել, իր գրաբար խճողումով (էլ չենք խոսում հոլովական արտառող դարտուղումներով) մի ամբողջ հիսնամյակ ևս էր տանում արևմտահայ լեզուն:

Չերազի առաջարկած ընտրողական հայերենի քերականութիւնը մեծ իրարանցում առաջ բերեց Կ. Պոլսի և Իզմիրի հայ մամուլում:

Մի կողմից դիրք էին բռնել գրաբարյանները հանձին «Մամուլ» երգիծաթերթի խմբագիր Գ. Այվազյանի, Հակոբ Գուրգենի և ուրիշների, մյուս կողմից նրա դեմ հարձակումներ էին գործում իբերալ բուրժուազիայի գաղափարախոսութիւնն արտահայտող հրապարակախոսներ Կ. Ություճյանը «Մասիսում», Օ. Խոջասարյանը «Օրագիր» թերթում, Շահնուրը (Մ. Մամուրյան) «Արևելյան մամուլում»:

Եթե գրաբարյանները կռվում էին զոց լեզվի գեղեցկութեան իրենց հին գենքերով, Օ. Խոջասարյանը, Կ. Ություճյանը և ուրիշները փաստարկում էին թե գիտութեան լավ չի հնչում, գիտութեան լավ է հնչում, ապա Մամուրյանի նման զարգացած ու հմուտ աշխարհաբարյանները շատ ավելի գիտական և սկզբունքային դիրքերից էին ոչնչացնում Չերազի միամիտ ու քմահաճ առաջարկները:

Չերազի լեզուն էլ շատ կարճ կյանք ունեցավ: Այդ լեզվով լույս տեսան իր մի քանի գրքերը («Գրական փորձեր», «Ազգային դաստիարակութիւն», «Գրիչ և սուր» և այլն), Եղիա Տեմիրճիպա-

1 «Գրական փորձեր», էջ 72:

շյանի մի փոքրիկ տետրակը «Նոր կյանք» վերնագրով և Հրանտ Ասատուրի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն: Չերազի «ընտրողական հայերենը» Մ. Փորթուկալյանը դարձրեց իր «Ասիա» թերթի պաշտոնական լեզուն: Բայց այսքանով էլ վերջացավ այս լեզվի պատմությունը և մի քանի տարի անց ոչ միայն իր համախոհները, այլ հենց Չերազը հրաժարվեց այդ լեզվից ու գրեց ընդհանուր լեզվով:

Չերազից բացի, ուրիշներ էլ փորձում են լեզվական քմահաճ փոփոխություններով գրել: Օրինակ, Ե. Տեմիրճիպաշյանը իր «Շահնազարյանի մը խղճին պարզ քննությունը» աշխատության մեջ արևմտահայ լեզվից առհասարակ դուրս էր գցում կը մասնիկը: Ահա նրա լեզվից մի նմուշ. — «Կեցիր, ով մարդ, վեր վերցուր աշերդ, հորիզոնն ի վեր լույս մը բարձրանա, ետին լուսո աշխարհ մը հառաջե»¹.

Կարապետ Ություճյանը իր «Մասիսում» տեսեր էմ, բերեր էմ արևմտահայ ձևերի փոխարեն գործածում էր տեսել էմ, բերել էմ արևելահայ ձևերը, որ ավելի մոտ էր գրաբարին:

Նույն այդ տարիներին աշխարհաբար լեզվին շատ ավելի հիմնավոր ծառայություններ էին մատուցում մամուլն ու թատրոնը:

Կ. Պոլսում հրատարակվող «Մասիս»-ը իր թարգմանություններով և ինքնուրույն հոդվածներով, Հ. Պարոնյանը իր հրատարակած թերթերով ու երգիծական գործերով մեծ դարկ էին տալիս նոր լեզվին:

1871 թվին Իզմիրում սկսել էր լույս տեսնել Մ. Մամուրյանի «Արևելյան մամուլը», որը շարունակվելով մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակը, խոշոր դեր կատարեց աշխարհաբարի ձևավորման գործում:

Մամուրյանը բազմաթիվ հոդվածներով մասնակցել է գրապայքարին և խելացի, համոզիչ փաստարկումներով ցույց տվել նոր լեզվի դարգացման ուղին:

Մամուրյանը գտնում էր, որ գրաբարը առհասարակ խոսակցական լեզու չի եղել, նրանով երբեք չեն խոսել ժողովրդական լայն մասսաները, նա եղել է միայն գրքի լեզու, մանավանդ թարգ-

¹ Ե. Տեմիրճիպաշյան, «Շահնազարյանի մը խղճին պարզ քննությունը», Կ. Պոլիս, 1870, էջ 13:

մանական գրականութեան լեզու: Գրաբարը ծաղկեցնելու կարծիքը հենց գրաբարի հետ մեռած համարելով, Մամուրյանը առաջարկում էր նոր լեզուն ստեղծել ոչ թէ հիմք ընդունելով Կ. Պոլսի լեզուն, կամ որեւէ բարբառ, այլ օգտագործել բոլոր բարբառների լավագույն տարրերը:

Մ. Մամուրյանը, և առհասարակ ամբողջ Իզմիրի դպրոցը, աշխարհաբարին մեծ ծառայութիւններ մատուցեցին հատկապէս թարգմանական գրականութեանը զարկ տալով: Այդ տասնամյակների ընթացքում Իզմիրում գործող Տեաեյան եղբայրների տպարանից միմյանց հետեից լույս տեսան Կ. Հյուգոյի, Ալ. Դյումայի, Ժյուլ Վեռնի և ուրիշ հեղինակների հարյուրավոր հատորները մեծ տիրաժներով և ողողեցին ամբողջ Իզմիրն ու Պոլիսը, բուն սեր զարթեցնելով երիտասարդութեան մեջ դեպի գիրքն ու ընթերցանութիւնը:

Թարգմանական գրականութեան կողքին աշխարհաբարին ուժեղ զարկ էր տալիս թատրոնը: Աշխարհաբարը թատրոնի բեմից ախորժալուր հնչում էր այնպիսի դերասանների բերանից, ինչպիսիք էին Պետրոս Աղամյանը, տիկին Հրաչյան և ուրիշները: Այդ այն շրջանն էր, երբ գրաբարյանները և աշխարհաբարյանները նույնիսկ կաշառում էին դերասաններին, որպէսզի նրանք այս կամ այն բանը անպատճառ գրաբար կամ աշխարհաբար արտասանեն բեմից¹:

Եթե փորձենք ամփոփել գրապայքարի այս երկրորդ շրջանի արդյունքները, ապա կտեսնենք, որ անցած քառորդ դարի ընթացքում աշխարհաբարը հիմնականում հաղթող է դուրս եկել գրաբարի դեմ մղվող պայքարում, գնալով ավելի ու ավելի ուժեղացրել է իր դիրքերը: Աշխարհաբարյանները կարողացել են ստեղծել մի լեզու, որը արդեն տիրապետող է մամուլում, թատրոնում, գեղարվեստական գրականութեան մեջ և բաւական կենսունակ է ու հա-

1 Դերասանուհի տիկին Հրաչյան իր հուշերում պատմում է, որ թատերասեր և աշխարհաբարի ջերմ պաշտպան Հակոբ Պալյանը առաջարկում էր իրեն ու Պետրոս Աղամյանին ախար բառի փոխարեն բեմում գործածել պարոն բառը, խոստանալով յուրաքանչյուր գործածութեան համար վճարել մեկ օսկի: Եւ իրենք էլ, որ արգեն հակում ունեին դեպի աշխարհաբար, հաճույքով էին կատարում Պալյանի առաջարկները ու նրանից ստանում օսկիներ:

մարձակ, չնայած որոշ գրողներ դեռևս չեն ազատագրվել գրաբարից: Վերջապես աշխարհագրարի հիմնավորմանը նվիրվում է այնպիսի մի լուրջ ուսումնասիրություն, ինչպիսին էր Հ. Արսեն Այտրնյանի «Քննական քերականություն արդի հայերեն լեզվի» գործը:

III

Գրապայքարի երրորդ շրջանը, որն սկսվում է 1884 թվականից և շարունակվում է մինչև 90-ական թվականների կեսերը, մինչև համիդյան ջարդերը, հայ մտավորականության արտասահման փախուստն ու գաղութահայ գրականության հիմնադրումը, արևմտահայ լեզվի մասնատումը, բնորոշ է երկու տեսակետից:

Եթե գրապայքարի առաջին և երկրորդ շրջաններում պատկերացի վրա կանգնած էին հիմնականում մի կողմից՝ նորածագ հայ բուրժուազիայի իդեոլոգիան արտահայտող մտավորական սերնդի ներկայացուցիչները, մյուս կողմից՝ Կ. Պոլսի պատրիարքարանն ու կղերապահականության գաղափարախոսության ջերմ պաշտպան մի խումբ հոգևորականներ ու աշխարհականներ, ապա գրապայքարի երրորդ շրջանում դեմ առ դեմ կանգնած են նույն հայ բուրժուազիայի տարբեր շերտերի գաղափարախոսության կրողները: Պայքարը այստեղ գնում է արդեն ոչ թե հիմնականում գրաբարի դեմ, որի անխուսափելի պարտությունը արդեն վիճարկման նյութ չէ, այլ աշխարհագրարը դեմոկրատական, աշխատավորական լեզու դարձնելու համար: Այս շրջանում արդեն գրաբարյաններն էլ փոխում են իրենց պայքարի մեթոդները, ոչ թե հանդես են գալիս գրաբարի դիրքերից, գրաբարը գրական լեզու դարձնելու պահանջով, այլ՝ հաղնելով աշխարհագրարյանների տարազը, փորձելով կանգնել նույն դիրքերի վրա, ցանկանում են որ լեզուն հեռու պահել ժողովրդական «գոեհկացումից» և այն, որքան հնարավոր է, մոտեցնել գրաբարին:

Գրապայքարը այս երրորդ շրջանում աչքի է ընկնում նաև համիդյան բռնապետության դեմ պայքարի ղենք դառնալով:

Հայտնի է, որ Սուլթան Աբդուլ Համիդը գահ բարձրանալով 1876 թվականին, առաջին մի քանի տարիների ընթացքում չկարողացավ միանգամից ուժեղ կապանքներ դնել մամուլի և հրատարակությունների վրա: Մինչև 80-ական թվականների սկիզբները դեռևս տպագրվում էին հին Հայաստանին վերաբերվող աշխատություններ, բեմադրվում էին պատմական ողբերգություններ: Մա-

մուլը ուղղված էր հայ մատենագրութեան վերաբերող բանասիրական հոգիվածներով: Հայրենիք, Հայաստան, ազատութիւն, սահմանադրութիւն բառերը թռչկոտում էին մամուլի էջերից դեպի ազգային հանդեսներն ու խնճուղները: Իսկ ուսում-թյուրքական պատերազմի խանդավառ օրերին ամենուրեք հոլովվում էր Հայաստանի ազատագրութեան գաղափարը և մարդիկ բարեմաղթում էին միմյանց հաջորդ տարին տոնել Հայաստանում:

Ընդհանուր առմամբ պատերազմի ավարտումից հետո սակայն, երբ ուսական բանակները քաշվեցին հայկական նահանգներից, Համիդը սկսեց արշունոտ դատաստան տեսնել խելացնոր երազների գիրկն ընկած հայութեան հետ: Հայ բուրժուազիայի անհեռատես ու անխոհեմ արարքների հաշիվը պահանջվում էր անմեղ հայ աշխատավորութիւնից: Գավառներում սաստկանում է ճնշումն ու կոտորածը: Քաղաքներումն էլ համիդյան ճնշումը արտահայտվում է մամուլի և հրատարակչութիւնների վրա դրվող ցենզուրական ծանր պայմաններով: Ամենից առաջ արգելվում են ազգային բեմագրութիւնները: Թատրոնը սկսում է ծառայել բացառապես եվրոպական գաղափարազուրկ զավեշտների ու արկածային պիեսների բեմագրութեանը: Պետրոս Աղամյանը իր խմբով անցնում է Թիֆլիզ, այնտեղից Մոսկվա ու արժանանում համաշխարհային հռչակի:

Ծիծաղելիութեան է հասնում Կ. Պոլսի մամուլի համար սահմանված խստութիւնը: Ոչ միայն արգելվում էր չգրել պատմական Հայաստանի մասին, ազգային ազատագրական գաղափարների մասին, չգործածել Հայաստան, հեղափոխութիւն, ազատութիւն, ապստամբութիւն, ըմբոստութիւն և այլ այս կարգի՝ մտքեր հուզող բառեր, այլև այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ երիտասարդութիւն, փափագ, աստղ և այլն, որոնցից յուրաքանչյուրը ասելով իր միամիտ ու ծիծաղելի պատճառաբանութիւնը: Չերբակալվում, բանտարկվում, տաժանակիր աքսորի էին ենթարկվում այնպիսի մարդիկ, որոնց տներում հայտնաբերվում էին Վարդան Մամիկոնյանի, Տիգրան Մեծի և այլ նշանավոր դեմքերի նկարները: Դպրոցներում խալառ արգելված էր հայոց պատմութեան հիշատակումն անգամ:

Այսպիսի պայմաններում է ահա, որ զարմանալի եռանդով քորքորվում է գրապայքարը: Արտաքուստ այդ կարող է թվալ տար-

օրինակ: Ինչպես պատահեց, որ հասարակական այդպիսի մի հուզող շրջանում, երբ մանավանդ աշխարհաբարը հաղթանակել էր, հայ ժողովրդի առաջ դրված էր մահու ու կենաց հարցը, իսկ հայ մտավորականության պարտականությունն էր ոգևորել ժողովրդին, շթողնել, որ նա նահանջի իր գրաված դիրքերից, հանկարծ ընթերցողների ուշադրությունը բեկովում է գրապայքարի վրա: Մարդիկ վիճում են հոլովների ու խոնարհումների մասին: Այս հարցը, դժբախտաբար, վրիպել է թե հայ լեզվաբանների և թե այդ շրջանի հայ հասարակական-քաղաքական կյանքի հարցերով զբաղվող բանասերների ու պատմաբանների ուշադրությունից:

Մեր կարծիքով այդ ոչ միայն պատահական մի բան չէր, այլ ընդհակառակը, մտածված մի խորամանկ քայլ էր, որի նպատակն էր ազդային ազատագրական տրադիցիաները վառ պահել հայ ժողովրդի սրտում: Գրաբարի և աշխարհաբարի այդ բուռն պայքարի ընթացքում երկու լեզուների բարեմասնությունները թվարկող դրողներն ու հրապարակախոսները հրապարակ էին քաշում Խորենացին ու Նդիշեն, Նզնիկն ու Լաստիվերացին, Սեբեոսն ու Բյուզանդը: Ընդարձակ մեջբերումներ էին կատարվում այդ հեղինակներից, իբր թե ցույց տալու համար գրաբարի այս կամ այն առավելությունը կամ թերությունը: Ուշագրավ մի երևույթ է նաև այն, որ մեջբերումներն ու հիշատակությունները ոչ այնքան կատարվում էին Աստվածաշնչից կամ Ավետարանից, ինչպես այդ ընդունված էր կատարել նույնիսկ ավելի ուշ շրջանում, այլ բացառապես հայ պատմիչներից: Ակնհայտ էր, որ գրապայքարը հրահրող այդ մարդիկ հայ ժողովրդի հետ, հատկապես նրա երիտասարդության հետ անցնում էին հայոց պատմության մի գաղտնի կուրս: Եթե այդ՝ դպրոցներում արտահայտվում էր այն բանով, որ ուսուցիչները (ինչպես Հրանդը) Կենտրոնական վարժարանում առանց դասադրքի շատ զգուշությամբ, բանավոր, այս կամ այն առիթով ընդարձակորեն խոսում էին հայոց պատմության մասին, վստահ լինելով ուսանողների գաղտնապահության վրա, ապա մամուլում նույն այդ բանը կատարվում էր հոլովների, խոնարհումների, այս կամ այն ոճի ցուցադրման քողի տակ:

Օրինակ՝ հնարավոր չէր ցենզուրական այդ խստության պայմաններում խոսել, ասենք, Վարդանանց պատերազմի մասին: Ահա լեզվապայքարին մասնակցող կողմերից մեկն ու մեկը ինչ

որ հարց ապացուցելու համար բերում է Եղիշեից ընդարձակ մեջբերումներ ու գրանով էլ հիշեցնում, ծանոթացնում պատմական այդ խոշոր դեպքը, ոգևորում պոլսահայ երիտասարդությանը:

80-ական թվականների գրական շարժման հիմնադիրներից ու դեկավարներից մեկը հետադաշում գրած իր հիշողությունների մեջ կատարել է մի ուշագրավ խոստովանություն, թե քաղաքական այդ սարսափելի պայմաններում մամուլի և ժողովրդի միջև եղել է «գաղտնի լեզու մը»: Ժողովուրդը հասկացել է եզոպոսյան այդ լեզուն¹: Ծով արդարև հիշյալ տասնամյակի, այսինքն՝ 1885—1895 թվականների արևմտահայ մամուլը մանրամասնորեն ուսումնասիրողը, ճիշտ է բավական դժվարությամբ, բայց կարող է գտնել այդ գաղտնի լեզվի բանալին ու բավական ուշագրավ երևույթների հանդիպել²:

Առանց լեզվապայքարի այս կողմը նկատի ունենալու անհնար է հասկանալ, թե ինչու այդքան արտակարգ եռանդով բորբոքվեց դրապայքարը «Արևելք»-ում, «Մասիս»-ում և «Հայրենիք»-ում և ինչու այդ պայքարին մասնակցեցին ժամանակի գրեթե աչքի ընկնող բոլոր գրողներն ու հրապարակախոսները (Ա. Արփիարյան, Գ. Զոհրապ, Տիգրան Կամսարական, Մելքոն Գյուրճյան, Տիգրան Արփիարյան, Եղիա Տ. միրճիպետյան, Մադաթյա Գարագաշյան, Ռեթեոս Պերպերյան և ուրիշները):

Հին պայքարողների կողքին այս շրջանում կռվի դաշտում երեւում են նորանոր անուններ: Նիզակը ձեռքին ասպարեզ է մտնում մի դեռատի օրիորդ էլ, ապագա Սիպիլը, որ Անահիտ ծածկանունով մամուլի էջերից նետեր է արձակում աշխարհաբարյանների

¹ Յենգուրական այդ ամենախոստագույն պայմաններում 80-ական թվականների գրողները հայրենասիրության, ազատագրական պայքարի կոչ էին անում եզոպոսյան լեզվով ոչ այնքան թերթերի առաջնորդողներում և կարևոր հոգվածներում, որքան երբեմն նույնիսկ աննշան լրատուներում, որոնք ավելի հեշտությամբ վրիպում էին ցենզորի աչքից: Այդպիսի մի ուշագրավ օրինակի մենք հանդիպեցինք «Հայրենիք» օրաթերթի խառն լուրերի բաժնում, որը սակայն որոշակիորեն այլ նպատակ է հետապնդում: Ահա այդ լուրի բովանդակությունը:

Գերմանական կառավարությունը Ֆրանսիայից հրավիրում է մի նշանավոր դերասանի՝ գերմանական քաղաքներում ներկայացումներ տալու և առաջարկում է նրան հայտնել իր պայմանները: Դերասանը հեռադրով իմացնում է իր հետեյալ պայմանը՝ էլզաս Լոտարինգյան և 5 միլիոն ֆրանկ... այսինքն՝ Ֆրանսիայի պահանջը:

դեմ: Բյուզանդ Քեչյանը պատասխանում է նրա հարվածներին՝ Սրամազի ծածկանունով: Սրամազի ու Անահիտի այս բանակովն էլ մի հաճելի կրկեսային խաղի քողի տակ հետապնդում էր նույն նպատակները, որոնց մասին մենք խոսեցինք վերևում:

Հատուկ ուսումնասիրության նյութ է այս բոլոր գրողների և հրապարակախոսների հողվածների քննարկումը այն տեսանկյունից, թե ինչքանով են նրանք գրապայքարը ծառայեցրել քաղաքական նպատակների, ինչպիսի արդյունքների են հասել, եզոպոսյան այդ լեզվով հիմնականում ինչ են քարոզել:

Քաղաքական այսպիսի նպատակներ հետապնդելով հանդերձ, շարունակվում էր կատաղի պայքարը գրաբարի վերջին պաշտպանների դեմ: Ինչքան ուժեղանում էր պայքարը գրաբարի դեմ, ինչքան մոտենում էր գրաբարի վերջնական պարտության ժամը, գրաբարյանների անձնատվության պահը, այնքան ավելի գրաբարամուլները ուժգին էին պաշտպանում մեռնող լեզուն: Կատարում էին օրհասական ճիգեր: Այդպիսի մի հուսահատական ձեռնարկում էր 80-ական թվականների կեսերից հինգերորդ դարի գրաբարով մի հանդեսի հրատարակման փորձը, որ կատարեցին ամենամույի գրաբարյաններ Հակոբ Գուրգենը և Մադաթյա Գարազանը, հրապարակ հանելով իրենց «Ճաշակ ոսկեղեն դպրության» հանդեսը: Ժամանակավրեպ այդ հանդեսը ամենախրթին գրաբարով ժամանակակից կյանքը ներկայացնելու, աստղաբաշխության, ծովագնացության և այլ հարցերի մասին հին լեզվով գրելու ճիգերով, ծիծաղելի էր դարձնում իր գոյությունը և շատ ավելի մի զավեշտաթերթի տպավորություն էր թողնում, քան մի լուրջ հանդեսի:

Անշուշտ «Ճաշակ»-ի խմբագիրները անհուսալի ճիգեր էին միայն կատարում: Հրատարակելով հազիվ մի քանի տասնյակ այդ հանդեսից, նրանք ոչինչ չէին կարող անել հեղեղի նման ամեն կողմ ողողող աշխարհաբարի դեմ, սակայն այնուամենայնիվ երեւելով ինքնին վկայում էր, որ ոչ միայն պայքարը դեռ չէր ավարտվել, այլ պահանջվում էր վերջին՝ ավելի ուժգին հարված:

Գրաբարյաններից շատերն էլ նահանջելով հանդերձ իրենց դիրքերից, հանդես են դալիս մի այլ՝ ոչ պակաս ծիծաղելի պահանջով, առաջարկում են արձակ գրականությունը, հրապարակախոսությունը գրել աշխարհաբարով, ժողովրդին հասկանալի լեզվով, իսկ շափածոյի լեզուն դարձնել գրաբարը: Պատճառաբանելով թե աշխար-

հաբարը անվայելուչ է և բանաստեղծական չէ: Գրաբարով բանաստեղծություններ էին գրում էմանուել Նալյանը, նույնիսկ աշխարհաքարյան գրող Նդիա Տեմիրճիպաշյանը և ուրիշները:

Չնայած մամուլում, զանազան հրատարակություններում հիմնականում իշխում էր աշխարհաքարը, բայց դպրոցական ծրագրերում դեռ մնում էր դրաքարը: Ուսումնական խորհրդում նստած Հակոբ Գուրգենը և ուրիշ պահպանողականներ՝ ազգային ժողովի ղեակցիոն վարչության ղեկավարներ Մաքսուտ Սիմոն բեյի, Վ. Նուրյանի բացահայտ հովանավորությամբ համառում էին աշխարհաքարը դարձնել դպրոցական լեզու:

Մեր բերած այս նկատառումներով էլ պատճառաբանվում է լեզվապայքարի ուժգին բորբոքումը այդ թվերին: Այս անգամ պայքարին մասնակցում են 80-ական թվականների մտավորական սերնդի բոլոր կարկառուն ներկայացուցիչները:

Պայքարը մղվում էր երկու մեծ օրաթերթերի «Արևելք»-ի ու «Հայրենիք»-ի և գրական բանասիրական հանդես դարձած «Մասիս»-ի էջերում, երբեմն արձագանք գտնելով նաև հայատառ թշուրքերեն թերթերում:

Զափազանց հետաքրքիր մի շրջան է գրապայքարի այս նոր շրջանը: Այստեղ արդեն Ռուսինյանի, Մինաս Չերազի և ուրիշների նման քմահաճ փորձերով ու հակադիտական առաջարկներով չէ, որ մարդիկ առպարեզ են իջնում: Պայքարը շատ ավելի սկզբունքային է, հետևողական և հետապնդում է քաղաքական նպատակներ:

19-րդ դարի 90-ական թվականներին նախկին պահպանողական տարրերը արդեն իրենց դրսևորել էին որպես մոլի ղեակցիոններ և սուլթանական կառավարության հլու կամակատարներ: Նրանք քարոզում էին հայ ժողովրդին մնալ նույն ստրկական համակերպող վիճակում, ինչ որ եղել էր մինչև ազգային ազատագրական գաղափարների հրահրումը, մինչև 40—50-ական թվականները: Այս մարդիկ, որոնց մեծ մասը ծառայության մեջ էր օսմանյան վարչական, կառավարական ապարատում, հանձին աշխարհաքարյանների տեսնում էին իրենց դասակարգային թշնամուն և ձգտում էին ամեն կերպ խախտել նրանց ձեռնարկումները, նրանց հրատարակությունները: Տեղ գտնելով ցենզուրական ապարատում, այդ վաճառված հայերը ամեն մի փոքր առիթով արգելում էին աշխարհաքար գրականության լավագույն նմուշների հրա-

պարակ գալը: Այդպիսի ազգադավ միջամտության պատճառով երկար ժամանակ կալանքի տակ մնաց, օրինակ, արևմտահայ առաջին ռեալիստական վեպը՝ Տիգրան Կամսարականի «Վարժապետին աղջիկը», որը միաժամանակ աշխարհաբարի փայլուն նվաճում էր:

Խնչքան էլ ռեակցիան մոլեգնում էր, սակայն անզոր էր աշխարհաբարի հեղեղը կասեցնելու: Ժողովրդական մասսաները, ողջունելով 80-ական թվականների առաջադեմ գրողների պահանջները՝ դպրոցական ծրագրից դրաբարը արտաքսելու մասին, իրենց հարյուրավոր նամակներով, բանավոր ու գրավոր ելույթներով հարկադրում են Ուսումնական խորհրդին տեղի տալ և աշխարհաբարը մտցնել դպրոցական ծրագրի մեջ որպես մայրենի լեզու:

Զափազանց ընդարձակ մի թեմա է 80-ական թվականների գրապայքարի քննարկումը: Մեկ մեկ ծանոթանալ մեկ տասնյակից ավելի գրողների լեզվագիտական ըմբռնումներին, ցույց տալ նրանց ձեռք բերած նվաճումները հնարավոր չէ այս սուղ էջերում: Մենք այս հոդվածում կանգ կառնենք հիմնականում շարժման դեկավար, խիզախ հրապարակախոս ու գրող Արփիար Արփիարյանի կարծիքների վրա և դրանով էլ գաղափար կտանք 80-ական թվականներին բորբոքված պայքարի մասին:

Արփիարյանը տարբեր շրջաններում հարյուրավոր առիթներով խոսել է աշխարհաբարի ու դրաբարի մասին ու ճշտել իր դիրքը գրապայքարում:

Նրա բազմաթիվ հոդվածները աշխարհաբարի մասին, մանավանդ նրա հանդուգն առաջնորդողները «Մասիս»-ում ու «Հայրենիք»-ում ռումբի նման էին պայթում Կ. Պոլսի մեշչանական ճահճում և շաբաթներով մտքեր հուզում:

Որոնք էին Արփիարյանի ըմբռնումները լեզվի մասին:

Լեզուն համարելով ոչ թե ի վերուստ մարդկանց տրված մի աստվածային շնորհ ու պարգև, այլ մարդկային պատմության ընթացքում տնտեսական ու մտավոր զարգացման զուգահեռ առաջացած մի գործոն, Արփիարյանը գտնում էր, որ լեզվի ֆունկցիան է նպաստել ժողովրդին, այդ թվում բազմահազար գյուղացիության մտավորական վերելքին, նրա լուսավորությանը: Հետևաբար, լեզուն ծառայում է որպես միջոց որևէ նպատակի հասնելու համար, իր

բառերով ասած «լեզուն նսպատակ մը չէ, այլ միջոց մը նսպատակի մը հասնելու համար»¹:

Լեզուն հարաշարժ է, տարիների ընթացքում շարունակ փոփոխվում, զարգանում, իր մասերից մի քանիսը կորցնում, նոր ձևեր ընդունում: Տարիների հոլովումի մեջ լեզուն ձևափոխվում է, իր հնացած անպետք մասերը պատմությանը հանձնում և տնտեսական ու մտավոր նոր պահանջների թելադրանքով արտահայտման նոր ձևեր ընդունում, զարգանում, ճոխանում: Իսկ այդ բոլորի դարբնոցը ինքը ժողովուրդն է, ժողովրդի բերանն է:

«Այդ բերանը,—կը պահե լեզվին հիմերը, որոնք բառերն են, բայց միշտ կը փոխե ու կը բարեփոխե... միշտ կը շրջե, կարդչունաբերի, բան մը կը պահե, բան մը կը կորսնցնե, ուրիշ բան մը կավելցնե, միշտ նույն խմորը, որը մշտական գոյափոխության մը ենթակա է»²:

Լեզվի ֆունկցիան գիտականորեն ըմբռնող Արփիարյանի կարծիքով, քանի լեզուն օգնում է մարդկանց՝ նրանց կուլտուրական վերելքի, զարգացման, հնչողականության համար, անհրաժեշտ է այն պահել: Հենց որ նա ի վիճակի չի դառնում բավարարելու այդ պահանջները, ետ է մնում կյանքից, այլ խոսքով նոր բովանդակությունը պահանջում է արտահայտման նոր ձևեր, մարդիկ հրաժարվում են հնից, ատեղծում են նորը: Չպետք է կառչել հին, վախենալ այն փոխելուց: «Ով որ չի բարեփոխվիր, կը կորսվի, այսպես վճռած է գիտությունը»³:

Խոսքը մասնավորեցնելով գրաբարին, Արփիարյանը գտնում էր, որ գրաբարը այնքան է այժմ հեռացել ժողովրդից, որ ոչ մի օգուտ չի կարող տալ նրան: Ժողովուրդը, այժմ ոչինչ չհասկանալով այդ լեզվից, թուփակի նման կրկնում է աղոթքները և եթե վենետիկը կամ վիեննան լույս են ընծայում դեռևս հին լեզվով դրքեր, ապա դրանց ընթերցողները ոչ թե հարյուր հազարներ են, այլ մի քանի վարդապետներ կամ վարժապետներ, մինչդեռ դրականությունը, ուսումը, դաստիարակությունը չպետք է դառնա մի խումբ մարդկանց սեփականությունը, պետք է դառնա լայն

¹ «Հայրենիք» օրաթերթ, Կ. Պոլիս, 1894, թիվ 959:

² Նույն տեղում:

³ «Մասիս», 1890, թիվ 3943:

զանգվածների սեփականությունը, միայն գրաբարի գեղեցկության հրապուրանքով չպետք է տարվել: Մենք ո՞ւմ համար ենք ապրում, հարցնում էր Արփիարյանը: Մեզ համար, մեր զավակների՝ համար, թե մեր նախահայրերի համար. «Մեզ պետք է ոչ թե հնացած, անհասկանալի, մեզ համար առեղծված եղող լեզու, այլ մեր ժամանակակից կենդանի ժողովրդային լեզուն»:

Ընդունելով լեզվի հարատև փոփոխման անհրաժեշտությունը և ակնարկելով նախորդ սերնդի հակազիտական քմահաճ փորձերը, Արփիարյանը նշում էր, որ լեզվի փոփոխումը ոչ հանձնաժողովների կամ օրենսդրական ժողովների միջոցով է լինում և ոչ էլ այս կամ այն անհատի, այլ այդ կատարվում է ժամանակի քննադրում, հաճախ աննկատելի ձևով, երբեմն միայն շեշտված: Որքան ծիծաղելի է մեռնող գրաբարին կառչած մնալը, նույնքան անիմաստ է արհեստական նոր լեզու ստեղծելու փորձերը:

«Մեծ օրենսգիրքը բնությունն է, անդոր է անոր դեմ որևէ մաքառում, հինցած ոչ մեկ բան կը դիմանա ժամանակին առջև, ոչ մարդը, ոչ լեզուն, ոչ գաղափարը, դի կյանքը մշտական դոյափոխություն է»¹:

Ինչի վրա էր խարսխվելու նոր լեզուն:

Ինչպես հայտնի է այս հարցը իր ժամանակին սուր կերպով արծարծել էր արևելահայերի մոտ Նալբանդյանը և դրան տվել էր սպառնիչ պատասխան:

«Ապրող ծառի ճյուղը, — կարելի է միայն ապրող ծառի վրա պատվաստել. չորացած ծառի ճյուղը, որ կտրես և բերես, ապրող ծառն էլ կտրելով նորա տեղը պատվաստես կամ ապրող ծառը կտրես ու տանես չորացած ծառի արմատի վրա պատվաստես, երկու դիպվածումն էլ դուր տեղը կտրեցիր քո ապրող ծառը, որովհետև ոչ չոր ծառի ճյուղը պիտի կենդանանա և զարթնի ապրող ծառի վրա պատվաստելով և ոչ թարմ ու զարթուն ծառը պիտի աճի մեքենայաբար խրվելով չորացած և անհյուսիս արմատի վրա»²:

Արփիարյանը, դիակ համարելով գրաբարը, գտնում էր, որ ոչ մի սրսկումով, արյան ներարկումով հնարավոր չէ կենդանություն տալ նրան: Առաջարկում էր նոր լեզվի հիմքը ընդունել ժողովրդի

¹ «Հայրենիք» 1894, թիվ 937:

² Մ. Նալբանդյան, «Երկեր», հ. 3, էջ 323:

խոսակցական լեզուն, օգտագործելով գրաբարի որոշ բառապաշարը և քերականական մի քանի կենդանի ձևեր:

Ի տարբերություն նախորդ սերնդի աշխարհաբարյանների, որոնք կամ քմահաճ կերպով օգտագործում էին գրաբարի ամենախրթին քերականական ձևերը և կամ խալառ հրաժարվում էին այդ բոլորից ու ստեղծում ծիծաղելի նոր ձևեր, Արմիարյանը ընդունում էր գրաբարից բացառապես այն, ինչ որ ժողովուրդը պահել էր իր խոսակցական լեզվում: «Ով պետք է տեղի տա» վերնագրով առաջնորդողում քննադատում էր այն մարդկանց, որոնք գրում էին յուրյանց, մինչդեռ ժողովուրդը ասում է իրենց: Պաշտպանում էր գրաբարյան մի քանի հոլովներ: Գրում էր.

«Ժողովուրդը չըսեւ եղբայրի, մայրի, հայրի, նեղուրջունի, այլ կ'ըսե եղբօր, մոր, հոր, նեղուրջան. ուրեմն մենք ալ համատարիմ կը մնանք ժողովրդի բերանին: Ով սորվեցուց հիմակվան գրողներու մեծ մասին իրենց քերականութիւնը: Ժողովրդի լեզուն»¹:

Իսկ ո՞րն էր համարում նա ժողովրդական լեզու: Համենայն դեպս ո՛չ կ. Պոլսի աղճատված և աղավաղված լեզուն, որը չի էր օտարաբանութիւններով: «Իրավ է, որ,—գրում է նա,—հիմա պոլսեցիները հայերեն կը գրեն, բայց այդ հայերենը խառնուրդ մըն է, քիչ մը գրքերե առնված, քիչ մը գրողներուն կողմէ շինված, քիչ մը գավառներէն եկողներուն բերնէն լսված բառերու և բացատրութիւններու: Հաստատ հիմք չունի և շուտ պիտի փոխվի»²:

Տարբեր առիթով գրած իր «Կյանքի լեզուն» առաջնորդողում դարգացնելով այն միաքր, թե որեւէ լեզվի զարգացումը համենայն դեպս երբեք չի կարող լինել գաղթականութեան մեջ, Արմիարյանը առաջարկում էր նոր լեզվի հաստատուն հիմքերը որոնել գավառներում: Նրա կարծիքով՝ բուն լեզուն պահել է միայն գավառը:

«Դարերու շրջանին մեջ,—գրում էր նա,—մեր ժողովուրդը իր նյութական կյանքին, հոգեկան կյանքին ու իր սրտին համար դարբնած է ահագին քանակութեամբ բառեր և բացատրութիւններ, անոնցմէ շատ փոքր մասը միայն անցած է հին գրքերու մեջ: Բայց ժողովրդին բերանը մագաղաթէն ավելի հարուստ ու տեղական է իր կյանքին պէս, երբ օր մը դիմում կընենք այդ բերնին.

1 «Հայրենիք» 1893, թիվ 434:

2 «Հայրենիք» 1892, թիվ 282:

կը գտնենք բացատրություններու, բառերու ահագին մթերանոց մը, որ ինքնին կը հարկադրեն աշխատողը նոր գրականություն մը հիմնելու»¹:

Եվ հենց գրողի հաջողությունն էլ Արփիարյանը կապում էր ժողովրդին մոտենալու, նրան հասկանալի լեզվով գրելու մեջ: Որքան գրողը ավելի մոտենա բնական, այսինքն՝ խոսակցական լեզվին, այնքան ավելի հեշտությամբ կկարողանա իր գաղափարներով թափանցել ժողովրդի մտքի մեջ, ազդել նրա վրա, առաջնորդել նրան: Ռուսահայ գրականության գտած ընդունելության հիմնական գաղտնիքներից մեկը նա համարում էր այդ: Սրանով էր բացատրում և այն, որ օրինակ, Պոռշյանի երկերը պոլսեցի երիտասարդներից ավելի հասկանում ու սիրում էին գավառի երիտասարդները՝ հեռու Խարբերդում և Չարսանջակում: Դրա համար էլ նա բարձր էր գնահատում գավառական գրողներին և բանասերներին, Գարեգին Սրվանձադյանցին, Տեր-Սարգսենցին և ուրիշներին: «Մեր սրտի զարգացումին, մեր լեզվի ու գրականության առաջադիմության համար Շահենը² կարժե հազար Վիրգիլյոսե, հազար Ոսկեբերանե, հազար Հոմերոսե, հազար Եղնիկե ավելի»:

Անշուշտ այսպիսի հախուռն համեմատություն կատարելով՝ Արփիարյանը երբեք չի ժխտել հայ պատմագրության արժեքը և այլ առիթներով բարձր է գնահատել մեր բոլոր պատմիչներին: Նրա ակնարկը վերաբերվում է լեզվին: Երբ Խորեն Ստեփանեն թարգմանեց Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Արփիարյանը ողջունելով նրա այդ քայլը, Խորենացու թարգմանությունը համարեց աշխարհաբարի խոշորագույն հաղթանակներից մեկը և խորհուրդ տվեց թարգմանել նաև Բուզանդի, Եղիշեի, Լաստիվերացու գրքերը:

Իհարկե այստեղ էլ պատահական չէր հատկապես Եղիշեի, Բուզանդի ու Լաստիվերացու ընտրությունը: Արփիարյանը ամենից շատ այդ հեղինակների մոտ էր տեսնում օտար բռնադատիչների դեմ պայքարի կոչ անող հատվածներ:

90-ական թվականների կեսերին գրեթե զինադուլ է հայտարարում գրաբարյան բանակը և անձնատուր լինում: Դրաբարը իս-

¹ «Հայրենիք», 1894, թիվ 772:

² Ակնարկում է Ս. Տեր-Սարգսենցի «Շահենն ի Սիրի» վեպը:

պառ իր տեղը զիջում է նոր լեզվին ու մնում միայն դպրոցական ծրագրում բարձր դասարանների համար:

Որոշ մարդկանց փորձերը՝ նորից հրահրելու բանավեճը և հասարակությանը զբաղեցնելու գրապայքարով, խիստ սաստվում են Արփիարյանի և Գր. Զոհրապի կողմից:

Գր. Զոհրապը, որ 1892 թվականից խմբագրում էր «Մասիս» հանդեսը, առաջինը հնչեցնում է պայքարի ավարտը հետևյալ բնորոշ տողերով.

«Մասիս»-ի խմբագրությունը կը կարծե, որ այսուհետև գրաբարի և աշխարհաբարի խնդիր չկա. կամ ավելի ճիշտ խոսելով՝ գրաբարի խնդիր չկա:

Աշխարհաբարը գրաբարով կոկելու ջանքը լեզվագիտական սխալ մ'էր ամուլ մնալու դատապարտված: Աշխարհաբարը ուրույն և անջատ լեզու մ'է, զոր և ոչ մեկ կապ կը միացնե գրաբարին. բաղդատություն անգամ ավելորդ է երկուքին մեջ. իր բնական ուժերը, զորս ժողովրդական բարբառեն կը քաղե, պետք չեն թողուր անիմաստ փոխառություններ ընելու մեռյալ լեզվե մը, որ պատմական ըլլալե ուրիշ նշանակություն չունի այսօր:

Մեր ժողովրդական լեզուն պիտի զարգանա ուրեմն, ինչպես կը զարգանան ուրիշ ամեն լեզուներ, ոչ թե հինին դառնալով, այլ այդ լեզուն խոսող հասարակության իմացական կարողության համեմատությամբ»¹:

90-ական թվականների կեսերից հետո գրապայքարը աննշան բոցկլտումներ միայն ունեցավ մի քանի այսպես կոչված սիրողների գրչի տակ (Հ. Թիրաքյան, Նլքենջյան և ուրիշներ) ու գրանով էլ մարեց: Այս վերջին ավարտական շրջանում գրապայքարը շատ էր հիշեցնում 40-ական թվականների մամուլում նոր սկըսվող մեզմ ու շուրջ պայքարը, միայն այն տարբերությամբ, որ եթե 40-ական թվականներին գրաբարյաններն էին անտարբերությամբ ու արհամարհանքով դիտում աշխարհաբարյանների թույլ ճիգերը, ապա 50 տարի անց, 80-ական թվականներին՝ աշխարհաբարյաններն էին հաղթողի հպարտությամբ նայում պարտված դասակարգի, պարտված ներկայացուցիչների թույլ ու անզոր փորձերին:

¹ «Մասիս», 1892, թիվ 3963:



~~USOՒԳՂԱԾ Է 1971 թ.~~

[10.]

11
64337